

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртутян» (образование) еженедельник 03.11.2021թ. չորեքշաբթի թիվ 45 (1018)

Աշնանային

Հայաստանի՝ աշունը... Կա՞ զեթ մեկ հայ, էլ ուր մնաց թե՛ հայ բանաստեղծ, որ տողեր ծոնած չլինի հայաստանյան աշնանը (*տե՛ս էջ 8-9*)... Հայա նայիր շուրջդ, բարեկան, տես՛, թե աշունը քանի՞ երանգ է վառել՝ դեղին, կարմիր, ծիրանագույն... կթվարկես, ո՞նց չէ... **Բնությունը**, ասես, ծիածան է հագել... **Քո երկիրը** թանգարան է բաց երկնքի տակ եւ նախեւառաջ՝ **Աստծո՛** ստեղծածով, որի մեջ ապրում ու չես նկատում, չես վայելում... Այդ ո՞ւր ես շտապում, մարդ Աստծո, կանգ առ մի պահ, դե՛ն նետիր հոգսերդ բոլոր, մտքերդ մոլոր, վայելի՛ր այս աշունն ու այս աշխարհը, այս գույներն ու այն արեւը, որ ամեն Աստծո օր, թեկուզ աշնան մշուշի միջից, նորից ժպտալու է քեզ...

Հայկական լեռնաշխարհի կոչված մեր բնօրրան երկիր դրախտավայրում **Աստված** նախատեսել է մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ բոլոր պայմանները: **Չորս գետերի** միջև տարածվող հովիտներում, որ երիզված են **Նոյյան տապանն** իրենց գագաթին պատսպարած սրբազան լեռներով, դրախտային ժամանակներում խայտացել են աշխարհիս գրեթե բոլոր կենդանիները, ու աճել մարդկությանը հայտնի բոլոր բուսատեսակների զգալի մասը... Պտուղներով առատ մեր լեռնաշխարհն իրավամբ կարելի է կոչել նաեւ **մրգաշխարհ**... Ուրիշ էլ որտե՞ղ կարելի է հանդիպել այն օդ ու ջրին, արեւի այն ջերմությանն ու հողի բերրությանը, որոնցով օժտված է **Հայաստան երկիր դրախտավայրը**... Եվ ուրիշ էլ որտե՞ղ կարող է մարդն ապրել երկար ու երջանիկ, եթե ոչ հենց այստեղ...

...Իսկ մենք հեռանում ենք **Դրախտից**: Ինքներս՝ մեր ազատ կամքով: Հեռանում ենք **մեր երկրից** թե՛ *հոգով*, թե՛ *մարմնով*... Նախ՝ *հոգով*, ապա՝ *մարմնով*... Երկու խոցեր մեր մարմնին ու հոգին վարակել են փտախտով՝ **արտագաղթը** եւ **աղանդները**... Եվ տեսանելի չէ *բժշկությունը*, որովհետեւ տեսանելի չեն *բժիշկները*: Նրանք, ովքեր հեռանում են, *կույր են աչքով*, եւ *կույր են մտքով* նրանք, ովքեր կարող են, բայց չեն կանխում *արտագաղթը հոգու եւ մարմնի*...

Արտագաղթի պատճառը *հացի խնդիրը* չէ բնավ, այլ ուռճացող *աղանդավորական գաղափարաբանությունը*, որ *ազգային գաղափարախոսության* այլախոսությունն է: *Աղանդավորականությունը* միայն *կրոնականը* չէ. **աղանդավորական գաղափարաբանությունն է ապազգային մտածողության ցանկացած դրսեորում**. *միջազգայնամոլությունը*, *աշխարհաքաղաքացիությունը*, *մարդու իրավունքների միակողմանի ընկալումն ու դավանումը*, *սպառողական հոգեբանությունը*... Վախենանք առավել **հոգու արտագաղթից**: Եվ առավել՝ **օտարամոլությունից**, որով տառապում են ոչ այնքան *հեռացողները*, որքան *մնացողները*, որ Հայաստանում ապրելով՝ *Հայաստանը Հայաստան չեն դարձնում*, եւ հեռացողները **Հայաստանից** չեն հեռանում, այլ՝ ինչ-որ *անձնական եւ անանձնական սոցիալական նպատակներ հետապնդող մի հասարակությունից*, որ աստիճանաբար կորցնում է իր **ազգային դիմագիծը**... Իսկ ո՞ւր մնաց **ազգային հեռանկարը**... Թվում է՝ թաղվել է աշնան մշուշում...

Աշուն է: Շուտով կգա ձմեռը: Փույթ չէ, մեր միտքն ու հոգին գարուն են ձգտում... **Ազգային գարուն**, որ լինի *հարատեւ*:

Գ.Ս.



Կառավարություն

Փոփոխություններ՝ նպաստների եւ կրթաթոշակների հատկացման կարգում

ՀՀ կառավարության վերջին նիստում որոշում է կայացվել փոփոխություններ կատարել բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ եւ պետական կրթաթոշակ տալու կարգում: Որոշման անհրաժեշտությունը բխում է «*Բարձրագույն եւ հետրուհական մասնագիտական կրթության մասին*» օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» եւ «*Կրթության մասին*» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքներից, որոնք ուժի մեջ են մտել 2021 թվականի օգոստոսի 16-ից:

Հարունակությունը՝ էջ 4

Աշխարհի հետ

ՀՀ պատվիրակությունը՝ ԱՊՀ ուսուցիչների եւ կրթական համակարգի աշխատողների 6-րդ համագումարում

Տաջիկստանի մայրաքաղաք Դուշանբեում հոկտեմբերի 27-29 տեղի է ունեցել ԱՊՀ մասնակից պետությունների ուսուցիչների ու կրթական համակարգի աշխատակիցների VI համագումարը:

Համագումարին մասնակցել է նաեւ ՀՀ պատվիրակությունը, որը գլխավորել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **ժաննա Անդրեասյանը**: Պատվիրակության կազմում էին ԿԳՄՍ մանկավարժահոգեբանական կենտրոնի տնօրեն **Արաքսիա Սվաջյանը**, Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոնի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար **Արտաշես Թորոսյանը**, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի տնօրեն **Արտակ Պողոսյանը**, ինչպես նաեւ նախարարոցական եւ հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններ ու ուսուցիչներ:

Հարունակությունը՝ էջ 2

Համակարգ

Նախարարը հանդիպել է բուհերի ղեկավարների հետ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանն** աշխատանքային հանդիպում է ունեցել պետական եւ ոչ պետական մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավարների հետ: Հանդիպմանը մասնակցել է նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Կարեն Թռչունյանը**:

Հանդիպման օրակարգի առաջին հարցը վերաբերում էր «*Բարձրագույն կրթության եւ գիտության մասին*» օրենքի նախագծի քննարկմանը: Նախարար Վահրամ Դումանյանը տեղեկացրել է, որ ԿԳՄՍ նախարարությունն Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հանրային քննարկման է ներկայացրել վերոնշյալ օրենքի նախագիծը, որի գլխավոր նպատակը բարձրագույն կրթության եւ գիտության համակարգերի արդյունավետության բարձրացումն է:

Հարունակությունը՝ էջ 3

Աշխարհի հետ

ՀՀ պատվիրակությունը՝ ԱՊՀ ուսուցիչների և կրթական համակարգի աշխատողների 6-րդ համագումարում



սկիզբը՝ էջ 1

Համաժողովը բացվել է լիագումար միաստով, որին ելույթ է ունեցել ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը: Նա անդրադարձել է Հայաստանի Հանրապետության և ԱՊՀ անդամ երկրների միջև կրթական համագործակցությանը՝ նշելով, որ կրթական կապերը կառուցվում են գլոբալացման համատեքստում և առավել հաճախ ոչ ֆորմալ են հիմնված մշակութային, պատմական արժանատիների և փոփոխական, հոգեւոր ու սոցիալական սկզբունքների վրա:

Ժաննա Անդրեասյանը նշել է, որ ԱՊՀ երկրների ժամանակակից կրթական պարադիգմը կենտրոնացած է նոր սերնդի կայուն մտավոր և մշակութային զարգացման վրա, որտեղ ինտեգրացիոն գործընթացները կառուցվում են հետխորհրդային տարածքում հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրթական համակարգի զարգացման կանխատեսումն ամենակարևոր խնդիրներից է:

«Ժամանակակից աշխարհում պետությունների կրթական համակարգերը, ցավոք, ամենաքիչն են պատրաստված ռիսկերի կառավարմանը, իսկ ուսումնական գործընթացների կանխատեսումն անհնար է առանց հաշվի առնելու ռիսկերը, առանց ուսումնասիրելու և վերլուծելու կրթության և մանկավարժության ոլորտներում փոխհամագործակցության պատմությունը:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը մշտապես շահագրգռված է եղել միջպետական համագործակցության և մասնագիտական կապերի ընդլայնման, կրթության ոլորտում տարբեր միջոցառումների անցկացման հարցերում: Անհրաժեշտ է դիտարկել բոլոր հնարավոր ռեսուրսները նորմատիվային փոփոխումները նորմատիվային փոփոխումները, մարդասիրական փոփոխարտացման և համակողմանի համագործակցության հա-

մար, քանի որ ԱՊՀ անդամ պետությունների կյանքի իրական հանգամանքները թելադրում են հարաբերությունների նոր պայմաններ ինչպես քաղաքական, տնտեսական, այնպես էլ կրթական, մշակութային և այլ ոլորտներում»,- մասնավորապես ընդգծել է ԿԳՄՍ նախարարի տեղակալը:

Նա նաև հավելել է, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն աշխատանք է տանում հորիզոնական կապերի ամրապնդման ուղղությամբ՝ կազմակերպելով փոխայցելություններ, փորձի փոխանակում, դասազբերով և ուսումնական նյութերով ապահովում և այլն:

«Կրթության և մանկավարժության ոլորտում Ռուսաստանի ու Հայաստանի հարաբերությունների փոփոխության և մշակութային վերլուծությունը, առկա փորձից բխած ընդհանրացումներն ու եզրակացությունները նոր, փոփոխված սոցիալ-պատմական և քաղաքական պայմանների առնչությամբ կարող են նպաստել հարաբերությունների նորովի զարգացմանը: Համագործակցության բոլոր երկրների համար միասնական կրթական տարածքի կարելիությունն ու անհրաժեշտությունը բխում են ԱՊՀ անդամ պետությունների միջև հարաբերությունների նոր մակարդակի հասնելու ձգտումից, այդ երկրների մշակույթի մեջ զգալի առաջընթացի պայմանների ապահովելու միտումից: Անհրաժեշտ է վերլուծություն, որը կարող է նպաստել նաև կրթության ոլորտում հետխորհրդային տարածքի երկրների միջև փոխգործակցության զարգացման հնարավոր մոդելի կառուցմանը, իսկ ռուս-հայկական կրթական և մանկավարժական կապերի փաստը կարող է ծառայել որպես ընդօրինակման օրինակ ընդհանրապես Համագործակցության երկրների միջպետական մշակութային և կրթական կապերի ամրապնդման գործում:

Մենք կարծում ենք, որ հետխորհրդային երկրներում կրթական համակարգերի զարգացումը կանխատեսելիս, սոցիալ-տնտեսական գործոնների հետ մեկտեղ, անհրաժեշտ է հաշվի առնել ինտեգրացիոն գործընթացները, որոնք ծավալվում են ինչպես Անկախ պետությունների համագործակցության տարածքում, այնպես էլ աշխարհում, որպես ամբողջություն»,- նշել է Ժաննա Անդրեասյանը:

«ԱՊՀ կրթական տարածքը՝ որպես նրա կայուն զարգացման ռազմավարական ռեսուրս» խորագրով համագումարին մասնակցել են պետական գերատեսչությունների, կրթական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև ուսուցիչներ ու մանկավարժներ Հայաստանից, Բելառուսից, Ղազախստանից, Ղրղզստանից, Ռուսաստանից, Տաջիկստանից և Ուզբեկստանից: Համագումարն անցկացվել է ԱՊՀ անդամ պետությունների հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի աջակցությամբ:

Համագումարի շրջանակում տեղի են ունեցել նաև թեմատիկ միասեր, պանելային քննարկումներ և կլոր սեղաններ, որոնց ընթացքում անդրադարձ է եղել կրթության ոլորտում հումանիտար համագործակցության ամրապնդման և զարգացման արդիական խնդիրներին: Դրանք ներառել են կրթության մատչելիության և որակի ապահովման, ուսուցիչների ժամանակակից վերապատրաստման, ուսուցիչների և ուսանողների շարժունության բարձրացման հարցերը, մասնավորապես՝ կրթական կազմակերպությունների միջև գործընկերության զարգացման և նորարարական մոտեցումների միջոցով: Զեմարկման հիմնական խնդիրներից է եղել կրթության թվայնացումը, ինչը թույլ կտա նոր տեխնոլոգիական մակարդակով ավելի

շատ համատեղ ինտեգրացիոն նախագծեր իրականացնել:

«Բոլոր մակարդակներում մատչելի և որակյալ կրթության ապահովման արդյունավետ ուղիների որոշում. թվայնացումը կրթության մեջ» թեմայով պանելային քննարկմանը ՀՀ-ից ելույթ է ունեցել ԿԳՄՍ մանկավարժափոքեմական կենտրոնի տնօրեն Արաքսիա Սվաջյանը, «ԱՊՀ երկրներում մանկավարժության զարգացման իրավիճակը և հեռանկարները» թեմայով պանելային քննարկմանը՝ Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արտաշես Թորոսյանը, իսկ «Ուսուցչի մասնագիտական չափանիշների և ԱՊՀ երկրների կրթական կազմակերպություններում դաստիարակչական աշխատանքների նորարարական մոտեցումները» թեմայով պանելային քննարկմանը՝ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի տնօրեն Արտակ Պողոսյանը: «Միջազգային հումանիտար համագործակցության ամրապնդման նպատակով ԱՊՀ անդամ երկրների կրթական կազմակերպությունների միջև գործընկերային հարաբերությունների կտրվածացում և զարգացում» թեմայով պանելային քննարկմանը ՀՀ-ից ելույթ է ունեցել ԿՏԱԿ-ի ներկայացուցիչ Հայկ Դավթյանը, իսկ «Ռուսաց լեզվի զարգացման, տարածման և պահպանման գործում համագործակցությունը՝ որպես ԱՊՀ անդամ երկրների ինտեգրման կարևորագույն միջոց» թեմայով պանելային քննարկմանը՝ ի. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռուսաց լեզվի ամբիոնի դոցենտ, Ուսուցիչների հայկական ասոցիացիայի նախագահ Լիլյա Բալասանյանը:

Համագումարի շրջանակում անցկացվել է նաև Մանկավարժական հմտությունների 1-ին միջազգային փառատոնը, որի արդյունքում երեք անվանակարգերում՝ «Ուսուցիչ», «Մանկավարժ» և «Հոգեբան/սոցիալական մանկավարժ», հանձնվել են դիպլոմներ: «Ուսուցիչ» անվանակարգում ՀՀ-ից փառատոնի երկրորդ փուլին մասնակցության հնարավորություն են ստացել Երեւանի Թաթևուկ Կրպեյանի անվան թիվ 62 ավագ դպրոցի ուսուցչուհի Անիտա Անտոնյանը և Կրպեյանի անվան թիվ 11 հիմնական դպրոցի ուսուցչուհի Անահիտ Գրիգորյանը, Վանաձորի Ա. Գրիբայեդովի անվան թիվ 11 ավագ դպրոցի ուսուցչուհի Նատալյա Նալբանդյանը և Նոյեմբերյանի թիվ 2 մանկապարտեզի տնօրեն Փառանձեմ Խանգելոյանը:

«Ուսուցիչ» անվանակարգում ՀՀ-ից փառատոնի երկրորդ փուլին մասնակցության իրավունք ստացած մանկավարժները՝ Երեւանի Թաթևուկ Կրպեյանի անվան թիվ 62 ավագ դպրոցի ուսուցչուհի Անիտա Անտոնյանը, «Շիրակացի» ճեմարանի ուսուցչուհի Սարինա Քոչարյանը, իսկ «Մանկավարժ» անվանակարգում՝ ճամբարակի թիվ 1 հիմնական դպրոցի ուսուցիչ Ջավահիր Ստեփանյանը:

ԱՊՀ անդամ երկրների լավագույն ուսուցիչներին ու մանկավարժներին շնորհվել է «ԱՊՀ կրթության գերազանցություն» կրծքանշան: ՀՀ-ից կրծքանշանի են արժանացել Հրազդանի ի. Աբովյանի անվան թիվ 1 ավագ դպրոցի ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի Անահիտ Գրիգորյանը, Վանաձորի Ա. Գրիբայեդովի անվան թիվ 11 ավագ դպրոցի ուսուցչուհի Նատալյա Նալբանդյանը և Նոյեմբերյանի թիվ 2 մանկապարտեզի տնօրեն Փառանձեմ Խանգելոյանը:

«Ուսուցիչ» անվանակարգում ՀՀ-ից փառատոնի երկրորդ փուլին մասնակցության իրավունք ստացած մանկավարժները՝ Երեւանի Թաթևուկ Կրպեյանի անվան թիվ 62 ավագ դպրոցի ուսուցչուհի Անիտա Անտոնյանը, «Շիրակացի» ճեմարանի ուսուցչուհի Սարինա Քոչարյանը և ճամբարակի թիվ 1 հիմնական դպրոցի ուսուցիչ Ջավահիր Ստեփանյանը արժանացել են դիպլոմների:

Միջոցառման ավարտին ընդունվել է համագումարի բանաձև, որում արտացոլվել են փոխգործակցության ոլորտներն ու մեթոդները, ինչպես նաև սահմանվել են ԱՊՀ-ում կրթության զարգացման ռազմավարությունը և հեռանկարային գործընթացները:

Հեղինակ՝ ՀՈՎՀԱՆՆԻՍԱՆ



«Անուշավան եւ Օֆիկ Աբրահամյան» հիմնադրամ

Արդյունավետ գործունեությունն Հայաստանում

ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը ընդունել է «Անուշավան եւ Օֆիկ Աբրահամյան» բարեգործական կրթական հիմնադրամի պատվիրակությանը՝ տնօրեն Անուշավան Աբրահամյանի գլխավորությամբ: Հանդիպմանը ներկա է գտնվել նաև նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը: Նախարարը շնորհակալություն է հայտնել բարերարին նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության ոլորտում տարիներ շարունակ ներդրած մեծ ավանդի համար: Նա նշել է, որ ՀՀ կառավարությունն անում է հնարավորը՝ ՄԿՈՒ ոլորտի դասախոսների եւ վարպետների համար աշխատանքային առավել գրավիչ պայմաններ ապահովելու համար: Նրա խոսքով՝ ներկայումս ծրագրեր են



իրականացվում ուսումնարաններում եւ քոլեջներում, տեսական դասընթացին զուգահեռ, ավելացնելու գործնական դասընթացների թիվը: Անուշավան Աբրահամյանը նշել է, որ անկախությունից հետո ՀՀ ՄԿՈՒ համակարգին պատշաճ

ուշադրություն չի դարձվել, այդ պատճառով ինքը որոշել է աջակցություն տրամադրել հենց այդ ոլորտի զարգացմանը: Բարերարի հավաստմամբ՝ իրականացված ծրագրերն ուղղված են նախնական եւ միջին մասնագիտական կրթության ոլորտում մարզերի

երիտասարդների հմտությունների եւ կյանքի որակի բարելավմանը, ինչն էլ իր հերթին հայրենի մարզում մնալու եւ իրենց մասնագիտությամբ պահանջարկ ունեցող աշխատանք գտնելու նոր հնարավորություններ է ստեղծում: Նա ընդգծել է, որ հետեւողական է լինելու 2006 թվականից ի վեր ՀՀ 9 ուսհաստատություններում իր կողմից իրականացվող ծրագրերի շարունակական բարելավման ուղղությամբ: Հանդիպման ընթացքում անդրադարձ է եղել նաեւ ուսումնական հաստատություններում առկա ենթակառուցվածքներն ու սարքավորումներն առավել արդյունավետ օգտագործելու եւ դրանք ուսումնական գործընթացին ինտեգրելու, ինչպես նաեւ դասախոսների եւ վարպետների

որակավորման բարձրացման խնդիրներին: Որպես շահույթ չհետապնդող բարեգործական կազմակերպություն «Անուշավան եւ Օֆիկ Աբրահամյան» հիմնադրամն ակտիվ գործունեություն է ծավալում Հայաստանում: Հիմնադրամն աջակցություն է ցուցաբերել 9 արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների՝ Վայոց ձորի, Տավուշի ու Սյունիքի տարածաշրջանային, Արարատի, Վարդենիսի, Արմավիրի ինդուստրիալ մանկավարժական ու Վանաձորի պոլիտեխնիկական պետական քոլեջներին, ինչպես նաեւ Հրազդանի եւ Մարալիկի արհեստագործական ուսումնարաններին:

Հեղինակ՝ ԳՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նախարարը հանդիպել է բուհերի ղեկավարների հետ

սկիզբը՝ էջ 1

Նշվել է, որ նախագիծն Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ ընդունել է 2021 թվականի մարտի 24-ին, սակայն ՀՀ նախագահի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանի 2021 թվականի օգոստոսի 2-ի համապատասխան որոշմամբ «Բարձրագույն կրթության եւ գիտության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերի մասով այն ճանաչվել է Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասին հակասող:

Նախագիծը համապատասխանեցվել է ՄԴ որոշման պահանջներին եւ ներկայացվել հանրային քննարկման: Օրենքի նախագծի քննարկման ընթացքում, մասնավորապես՝ անդրադարձ է եղել բուհերի հոգաբարձուների խորհուրդների ձեւավորման եւ ղեկավարների ընտրության հարցերին: Վահրամ Դումանյանը նշել է, որ օրենքի ընդունումից հետո դրա կիրարկման համար անհրաժեշտ է համախմբել ոլորտի բոլոր ներկայացուցիչների ջանքերը: Հանդիպման հաջորդ հարցը վերա-

բերել է բուհերում առցանց ուսուցման անցնելու գործընթացով պայմանավորված՝ հնարավոր խնդիրներին: Այդ համատեքստում նախարարը բուհական եւ գիտական հանրությանը ի դեմս ղեկավարների, հորդորել է ամմասն չճանաչել եւ պայքարել հակապատվաստումային քարոզչության եւ հակագիտական երեւույթների դեմ: Հանդիպման արձարծվել են նաեւ ասպիրանտուրայի ընդունելությանը, բուհերի միասնական քննություններին վերաբերող եւ հարակից այլ հարցեր:



Արցախ

Սուրբ Հակոբավանքի ներկան՝ անցյալով

Արցախի հիմնավոր սրբավայրերից մեկի՝ Հակոբավանքի վերանորոգման մասին օրերս ազդարարվեց «Հակոբավանքի վերածնունդ» նախագծի մեկնարկով: Վանքը հայտնի է նաեւ Մեծառանից անուրով (պատմական Մեծ Հայքի Մեծառանկ գավառ, որը հետագայում վերանվանվել է Ներքին հաչեն): Վանքը մեկ ու կես կմ է հեռու Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղից, ու դրանք շարունակ այստեղ աղոթք է հնչել եւ մատաղ մտուցվել: Պատմական աղբյուրների համաձայն վանական համալիրը կառուցվել է 5-7-րդ դարերում եւ իր գործունեությամբ՝ հոգեւոր, կրթական ու մշակութային մեծ դերակատարություն ունեցել մեր ժողովրդի պատմության մեջ: Դադիվանքի, Գանձասարի, Ամարասի, Գուշավանքի շարքում:



Ճարտարապետության ավանդների կրող Հակոբավանքն ուրույն նկարագիր ունի՝ երկու եկեղեցիներով, երկու գավիթով, կացարանային եւ տնտեսական շինություններով ու այդ ամենն ամփոփող պարսպապատով: Գավիթներից մեկը ծառայում էր որպես ազնվականների եւ հոգեւոր բարձր դասի գերեզմանատուն: Այստեղ են թաղված կաթողիկոսներ Արիստակեսը, Սիմեոնը, Հովհաննեսը: Տարածքում կան 40-ից ավելի վիմագրեր, խաչքարեր, արձանագրություններ: Վանքի

պատերի ներսում հայտնաբերվել է հայկական խաչքարի ամենահին պատվանդանը (853թ.): Վերջին անգամ վանքը վերանորոգվել է 18-րդ դարում, իսկ 19-րդի վերջից դադարել է գործել: Այսօր փլուզման եզրին է եւ փրկության ծրագիրը կիրականացվի «Հայ ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի», ԱՀ կառավարության եւ ՀԱԵ Արցախի թեմի ջանքերով: Վերականգնման համար «ռե-Արմենիա» համագործակցության հարթակը դրամահավաք է կազ-

մակերպելու: Նախաձեռնող խմբի տեղեկացմամբ՝ աշխատանքների նախագիծը ճարտարապետ Սամվել Այվազյանինն է: Նա հայտնի է իր հարուստ փորձով, զբաղվել է իր հարուստ փորձով, զբաղվել է Դադիվանքի, Սաղմոսավանքի, Թաղեի վանքի եւ հոգեւոր այլ կոթողների վերականգնողական աշխատանքներով: Ճարտարապետի գնահատմամբ՝ անգնահատելի արժեք ունեն Հակոբավանքի կամարները, բեմաձևատները, դռների երեսկալները: «Վանական համալիրի վերականգնումն իրականացվելու է փուլերով: Նախ-

կվերականգնվեն հյուսիսային եւ արեւելյան եկեղեցիները, գավիթներն ու սյունասրահը: Նախատեսվել են նաեւ պեղման ու մաքրման աշխատանքներ»,- նշել է ճարտարապետը: «Մշակութային ժառանգությունը վերականգնող հայ ճարտարապետների ասոցիացիան» տրամադրել է մասնագիտական աջակցություն, իտալացի ճարտարապետ եւ փորձագետ Գայանե Կանդատին փորձագիտական խորհրդատվություն: Նախագծին միացել են մի շարք միջազգային փորձագետներ, անհատներ ու կազմակերպություններ: Պատերազմից հետո թշնամու գերության մեջ հայտնված հայկական մեծաթիվ հուշարձանները հոշոտվում են ոչնչացման եւ օտարացման բարբարոսությամբ: Եվ մշակութային պատերազմում վանական այս համալիրի վերականգնումը կլինի մեր պայքարի ու մասնակցություն խորհրդանիշ: Արցախի թեմակալ առաջնորդ, գերաշնորհ Տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի հանդգամամբ՝ Հակոբավանքը վերականգնումից հետո կլինի գործող եկեղեցի: Եվ սա՛ թուրին ի տես, քանզի մենք ենք պատմական մեր վանքերի ու եկեղեցիների տերը: Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ք. Ստեփանակերտ, մեր սեփական թղթակից

Բարեփոխումներ

335 լաբորատորիաներ՝ 107 ավագ դպրոցներում



Մայրաքաղաքի եւ 33 մարզերի ավագ դպրոցներն այս ուսումնական կիսամյակում բնագիտական առարկաներն ուսումնասիրում են ժամանակակից ռեսուրսներով կահավորված լաբորատորիաներում: Դրանք դպրոցներում ստեղծված արդիական ուսումնական միջավայրեր են, որտեղ աշակերտը տեսական գիտելիքներն ամրապնդում է գործնական հմտություններով:

Նորաստեղծ լաբորատորիաներն ավագ դպրոցներում կարող են դառնալ այն օղակը, որը կապում է բիզնեսն ու կրթությունը: Ավագ դպրոցներում նման արդիական սարքավորումների առկայությունը կնպաստի երիտասարդների շրջանում գիտական հետազոտությունների նկատմամբ հետաքրքրության զարգացմանը եւ նորարարական ծրագրերի իրականացման հմտությունների ձեւավորմանը: Լաբորատորիաներում մեկտեղվում են տեսականն ու գործնականը. դա փաստում են Գորիսի թիվ 4 ավագ դպրոցի ուսուցիչները, որտեղ բնագիտական առարկաների լաբորատորիաներն արդեն իրականություն են եւ օգտագործվում են ամենօրյա դասապրոցեսում: Վեդիի ավագ դպրոցում լաբորատոր սարքավորումները նույնպես կիրառվում են. կենսաբանության բոլոր դասերն անցնում են լաբորատորիայում: ՀԴՄՀ հենակետային վարժարանում, տնօրենի հավաստմամբ, լաբորատորիաները եւս ամենօրյա կիրառելիություն են ունենալու:

Մինչ լաբորատոր սարքավորումների տրամադրման գործընթացի մեկնարկը ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ը նախապես մշակել է բնագիտական առարկաների գծով գնման ենթակա լաբորատոր սարքավորումների համակազմը. լաբորատորիաների կահավորման մոդելները, իրականացվել են ուսումնասիրություններ, կարիքների գնահատում:



Լաբորատորիաների ստեղծման գործընթացը մեկնարկել է 2020 թ.-ի փետրվարից: Ենթաբաղադրիչի աշխատանքների շրջանակում 2021 թ.-ի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ամփոփվել է 8 ավագ դպրոցներում հիմնանորոգման ընթացքում գտնվող բնագիտական առարկաների լաբորատորիաների ստեղծման, այն է՝ լաբորատոր սարքավորումների տրամադրման, կահույքի ձեռքբերման եւ տեղադրման գործընթացը:

Արդյունքում ՀՀ 107 ավագ դպրոցներում այսօր գործում են բնագիտական առարկաների գծով 335 լաբորատորիաներ:

Հավելենք, որ բնագիտական առարկաների («Ֆիզիկա», «Բիոլոգիա», «Աշխարհագրություն» եւ «Կենսաբանություն») գծով լաբորատորիաները ստեղծվել են Համաշխարհային բանկի համաֆինանսավորմամբ, ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի կողմից իրականացվող «Կրթության բարելավում» վարկային ծրագրի «Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը» ենթաբաղադրիչի շրջանակում:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Փոփոխություններ՝ նպաստների եւ կրթաթոշակների հատկացման կարգում

սկիզբը՝ էջ 1

Օրենքներում ամրագրվել են պետության կողմից ֆինանսական աջակցություն ստացող սովորողների նոր խմբեր՝ մարտական գործողությունների մասնակից եւ երկու ու ավելի անջափհաս երեխա ունեցող սովորողներ, որն իր արտաքույնում է ստացել որոշման մեջ: Համապատասխան փոփոխություններ եւ լրացումներ կատարելով եւ իրավական հիմք ապահովելով՝ հնարավորություն է առաջացել Կառավարության որոշմամբ կարգավորել մարտական գործողություններին մասնակցած, ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող, սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի, առկա ուսուցմամբ բակալավրի կամ ինտեգրացված կրթական ծրագրով ընդունված երկու եւ ավելի անջափհաս երեխա ունեցող ուսանողներին տրվող նպաստների չափերը, ինչպես նաեւ ամրագրելու առաջադիմության շեմեր (ՄՈԳ):

Այսպես, որոշմամբ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված սովորողների հա-

մար, պահպանելով գործող կարգի անպահովության միավորի ու մասնակի փոխհատուցման չափը (28+5 միավոր՝ 50% գեղչ, 28+10 միավոր՝ 60% գեղչ, 28+15 միավոր՝ 70% գեղչ, 28+20 80%-90% գեղչ), սահմանվել է միջին որակական գնահատականի (ՄՈԳ) առավելագույն արժեքի առնվազն 60 տոկոսի շեմը հաղթահարելու պահանջ, իսկ բակալավրի եւ ինտեգրացված կրթական ծրագրերով կրթական աստիճանում առաջին կուրսում մասնակի փոխհատուցումը կտրամադրվի համապատասխան մասնագիտության համար սահմանված ընդունելության քանությունների արդյունքների հիման վրա:

Ըստ որոշման սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի, մարտական գործողություններին մասնակցած ուսանողներին, առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ եւ ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունված երկու եւ ավելի անջափհաս երեխա ունեցող ուսանողների խմբերին փոխհատուցում կտրամադրվի հետևյալ կերպ՝

1) առաջին կուրս ընդունված ուսանողներին

ա. բակալավրի ու ինտեգրացված կրթական ծրագրերով՝ համապատասխան մասնագիտության համար սահմանված ընդունելության քանությունների արդյունքների հիման վրա՝ տարեկան ուսման վճարի 50 տոկոսի չափով,

բ. մագիստրոսի կրթական աստիճանի դեպքում՝ նախորդ կրթական աստիճանի ՄՈԳ-ի 60 տոկոսը հաղթահարած ուսանողներին՝ տարեկան ուսման վճարի 50 տոկոսի չափով,

2) հաջորդ կուրսերում՝

ա. նախորդ ուսումնական տարվա արդյունքներով՝ ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 60-70 տոկոս ունեցող ուսանողներին՝ տարեկան ուսման վճարի 50 տոկոսի չափով,

բ. նախորդ ուսումնական տարվա արդյունքներով՝ ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 71-79 տոկոս ունեցող ուսանողներին՝ տարեկան ուսման վճարի 60 տոկոսի չափով,

գ. նախորդ ուսումնական տարվա արդյունքներով՝ ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 80 տոկոս եւ բարձր ՄՈԳ ունեցող ուսանողներին՝ տարեկան ուսման վճարի 70 տոկոսի չափով:

Հ. Հ.

Մեթոդ

Գեղարվեստական շարադրանքի ստեղծման եւ խմբագրման ուսուցման կազմակերպումը

Հայոց լեզվի եւ գրականության դասընթացների անբաժան եւ յուրահատուկ մասն են կազմում գեղարվեստական շարադրանքները, որոնք ունենում են տարբեր կառուցվածք, նպատակադրում եւ ստեղծման մեթոդներ: Դրանք ստեղծագործական են, անհատական, սակայն շատ մեծ է ուսուցչի դերն ու աշխատանքը նրանց որակը եւ յուրաքանչյուր աշակերտի ձեռագիրը ապահովելու համար: Այսպիսի աշխատանքները մի կողմից պատկերացում են տալիս սովորողի իմացական, զգացական, բարոյական որակների մասին, մյուս կողմից նպաստում են դրանց հարստացմանն ու խորացմանը: Գեղարվեստական շարադրանքի ստեղծման եւ խմբագրման ուսուցման ընթացքում բացահայտվում են խորացվում են աշակերտների գիտելիքները, խոսք կառուցելու հմտությունները: Ուսուցումը միտված է բառապաշարը հարստացնելուն, կապակցված խոսքի զարգացմանը: Զարգանում են նաեւ լեզվամտածողությունը, ստեղծագործական կարողությունները: Նմանօրինակ ուսուցումները կարող են հիմք դառնալ նաեւ հաղորդակցական, համագործակցային կարողությունների համար, միանշանակ նպաստում են աշակերտների ինքնարտահայտմանը: Գրավոր ստեղծագործական խոսքը լի է ներթափանցում հնարավորություններով եւս:

Տրված բնագիրը աշակերտը կարող է հարստացնել հոմանիշներով, գեղարվեստական պատկերավորման միջոցներով, ընդարձակել, համառոտել, փոփոխել վերջաբանը, դեպքերի ընթացքը, մեկնաբանություններ հավելել:

Գեղարվեստական շարադրանք կարելի է ստեղծել տրված բառերն ու բառակապակցությունները կիրառելով: Այսպես՝

1. Մեծ, բարձր, երկինք, լեռներ, գարուն, փայտյա, դուռ, ելք, կանաչ, աստղ, շողջողուն, ծաղկուն, երեկոյան, սեր, քաղաք, մայրական բառերով կազմել ածական-գոյական կապակցություններ եւ դրանցով ստեղծել բնագիր:

2. Բացատրել տրված ասացվածքների ու թեւավոր խոսքերի իմաստը՝ «խոսքը կտուրը գցել», «հարսնը եկավ, հալալին

տարավ», «ճտերն աշնանն են հաշվում», «ծովը ծնկներինն է»: Ասել երկու ասացվածք եւս եւ բոլորով շարադրանք կազմել:

3. Ստեղծել համեմատություններ եւ դրանց կիրառմամբ՝ շարադրանք: Երիտասարդը լրդում էր (ինչի՞ պես): Չայնը դողանջում էր (ինչի՞ պես): Արեւը ժպտում էր (ո՞ւմ պես): Խնձորենին գուզվել էր (ո՞ւմ պես): Սլացավ (ինչպես ի՞նչը):

4. Տրված բառերով ու բառակապակցություններով (օրինակ մեկ կամ մի քանի ուղղագրական կանոնի կամ հնչյունափոխության դեպքերի հետ առնչվող) ստեղծել գեղարվեստական շարադրանք: Բառախմբի օրինակ տապ, ձկների խայտանք, խեղդող շոգո, տոթակեզ ամառ, ակամա քարանալ, ծերունի ձկնորս, նվաղած առվակ, զմրուխտ կանաչ, ամայի տարածություն, անդորր, տաղտկալի, հորիզոնի վրա, լուրթ երկինք, կարթը ջուրը ձգել:

Նման առաջադրանքներ կարելի է հանձնարարել եւ տանը, եւ դասարանում կատարելու, եւ որպես անհատական, եւ որպես խմբային աշխատանք: Ուսուցիչը բացատրում է, մեկնաբանում, երբեմն էլ ինքն է տեքստեր կազմում, աշակերտների կազմած լրացումն իր եւ նրանց կողմից: Գրատախտակին գրվում են բառեր, որոնք բացատրվում են, ստուգաբանվում, կազմվում են նախադասություններ: Աշակերտը գեղարվեստորեն շարադրում է նաեւ հեղինակային բնագրեր, այսինքն փոխադրում է: Փոխադրություն գրելուն նախորդում է ուսուցչի ընթերցանությունը, աշակերտների հետ պլան կազմելը, երբեմն մեկ-երկու աշակերտի պատմելը: Իսկ շարադրությունների տեսականին, նպատակադրումը, ծավալը երբեմն իրարից շատ են տարբերվում, եւ յուրաքանչյուր տեսակը ենթարկվում է ուսուցչի եւ աշակերտների անհատական եւ համագործակցային աշխատանքի տարբեր ձեւեր:

Աշակերտը դասարանում կարող է գրել փոքրիկ շարադրանք գրական նյութի կամ նրա որեւէ բաղադրամասի վերաբերյալ, կարող է վերլուծել գրական երկը ծավալուն շարադրանքով: Նա լսում է, ուսուցչին, կարդում նյութը, հետազոտում, հարակից նյութեր հավաքում, դասողա-

տում եւ գրում գրական թեմայով շարադրություն, որը կարող է լինել թեմատիկ կամ ուսուցողական: Շարադրության վերջին տեսակը կարդացվում, քննարկվում է, արվում են հավելումներ, ուղղումներ, շտկումներ: Երբեմն ուսուցիչը տվյալ թեմայի բանավոր կամ գրավոր շարադրանքով ինքն էլ է մասնակցում դասին՝ նախօրոք աշակերտներին օգնելու, կողմնորոշելու համար: Ահա մի հատված իմ «Օրվա խորհուրդը» շարադրանքից (նվիրված հայոց բանակին). «Որպես մի արտույտ՝ ծախքում եւ հույսը, դրոշմվում օրվա ունկերին, լույս է շնչում, լույսով է շնչում ու հայակնիք հավատի երգով դողանջում: Օրը՝ անցյալի ու սպազայի հանդիպվալորը, մեզ առնում է իր սրտի թեւերին ու հայահունչ զգացումների թարգման դառնում: Վեհատեսիլ մի շղարջ դառնում է օրվա ծիրանին: Օրը արքա է՝ ծիրանավառ ու հավատավոր, աղոթքով ու կամքով լեցուն: Օրը ոգի է՝ ճառագայթալ ու իմաստավոր, երգ է՝ խորխոր ու հզոր: Ծնարտության, բարության, արդարության ու միջի հավատավորն է օրը, արիության ու բարության նժարների կշեռք-լծակը: Փառք ու խոնարհում այս օրվա խորհուրդը կողմերին, որ հողագործ էին ու շինարար, բանաստեղծ էին ու զինվոր: Փառք մեր ժողովրդին, որ օրվա խորհրդի արարողն է, փառք մեր ժողովրդին, որ մեր օրերում էլ վերածնեց Ավարայրի ոգին եւ ունեցավ Ապարապետ, որ հայ զինավառ ոգին կնքեց հայոց բանակ անունով: Օրը բանական է, մերն է այս օրը՝ որպես խաղաղության վեհաշուք կաղնի, որի ճյուղերն են հայոց քաջերը: Ամեն մի հայ արծիվ է, իսկ երկիրս՝ արծվաբուն»:

Ազատ թեմայով շարադրությունները առավել նպաստում են ստեղծագործական կարողությունների զարգացմանը եւ ճանաչողության խորացմանը, արժեքային համակարգի ձեւավորմանը:

Կարինե ԱՐՄԵՆՅԱՆ
Օջականի Մեսրոպ Մաշտոցի անվան միջնակարգ դպրոցի հայոց լեզվի, գրականության ուսուցչուհի



«Տարվա լավագույնները»

Վիքիդասարաններ՝ դպրոցներում

Լեռնապատի միջնակարգ դպրոցի դասվար Լիաննա Աբազյանի և մաթեմատիկայի ու ինֆորմատիկայի ուսուցչուհի Լիլիթ Գալստյանի ներկայացրած «Տարվա լավագույնները» մրցույթի «Չորսական դասարան» ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագրի կամ նախաձեռնության համար» անվանակարգում: Նրանք ներկայացրել են «Վիքիդասարանի ստեղծումը՝ Չորսական դասարան» մեթոդի կիրառմամբ» ծրագիրը, որն արժանացել է մրցութային հանձնաժողովի բարձր գնահատականին:

Մեզ հետ զրույցում ծրագրի համահեղինակ Լիաննա Աբազյանը նշում է, որ նախագծի նպատակն է հանրակրթական դպրոցներում ստեղծել վիքիդասարաններ՝ հայերեն Վիքիպեդիայում հոդվածների խմբագրման միջոցով խրախուսելով աշակերտների նոր գիտելիքներ ձեռք բերելու ձգտումը, ինչպես նաև նպաստել Վիքիհանրագիտարանում հայերեն հոդվածների ավելացմանը: «Ծրագրի միջոցով մենք խնդիր ենք դրել փոփոխություն մտցնել ավանդական մեթոդներով վարվող դասապրոցեստում նպաստելով աշակերտների ակտիվացմանը և նոր հմտությունների զարգացմանը, ինչպես նաև բարձր առաջադիմություն չունեցող աշակերտների ներգրավմանն ուսումնական գործընթացում: Մեր խն-

դիրն է՝ ապահովել նորագույն տեխնոլոգիաների կիրառումն ուսումնական գործընթացում և ՏՀՏ գործիքներից օգտվելու հմտության զարգացումը՝ նպաստելով նաև միջառարկայական կապերի ձևավորմանը և ինտեգրված դասերի կազմակերպմանը»,- մեզ հետ զրույցում ասում է Լիաննա Աբազյանը՝ հավելելով, որ ծրագրի ակնկալվող արդյունքն ուսուցչի և աշակերտների միջև համագործակցության խթանումն է նյութերը թարգմանելու, սխալներն ուղղելու, խմբագրելու և հոդված ստեղծելու նպատակով:

Ծրագրի մյուս համահեղինակ Լիլիթ Գալստյանն իր հերթին նշում է, որ համագործակցելով «Վիքիպեդիա Հայաստան» ԳՀԿ նախագահ Սուսաննա Մկրտչյանի հետ՝ ծրագրի շրջանակում նախատեսվում են համայնքներում Վիքիպեդիայի խմբակներ ստեղծել կամ ուսուցիչներ համար խմբագրման հմտությունների մի քանի դասընթացներ կազմակերպել: «Արդյունքում կունենանք վիքիդասարաններ, որոնց աշակերտները կկարողանան դասին ինքնուրույն նախապատրաստվել, թարգմանություններ կատարել (օգտվել օնլայն բառարաններից), խմբագրել հոդվածներ: Դասի ավարտին օնլայն գործիքներից մեկի միջոցով պատրաստված թեստով էլ կգնահատվեն, որը կլինի հնարավորինս օբյեկտիվ»,- ծրագրի մանրամասներն է ներկայացնում Լիլիթ Գալստյանը և



հավելում, որ ծրագիրը կնպաստի նաև ուսուցիչների մասնագիտական գիտելիքների խորացմանը և ինքնակրթությանը:

Ծրագրի իրականացման պլանով նախատեսվում է Վիքիպեդիայում հոդվածների խմբագրման հմտությունների ձեռք բերման նպատակով ուսուցիչների վերապատրաստում, աշակերտներին խմբագրման հմտությունների ուսուցանում, դասանյութի վերաբերյալ հոդվածների պատրաստում, դասապրոցեսների անցկացում, փորձարկում, վիքիդասարանների ստեղծում և փորձի փոխանակում:

Ծրագրի հեղինակները վստահեցնում են նախագծի շարունակականության ապահովման նպատակով նման ձևաչափը կարելի է

կիրառել անընդհատ, քանի որ այն ենթադրում է դասարանի բոլոր աշակերտների ներգրավում դասապրոցեսին: «Այսօր Վիքիպեդիա նախագիծը փորձում է ընդլայնել իր սահմանները և խմբակներ ստեղծել ողջ Հայաստանում, հետևապես ծրագիրը կիրառելի է ցանկացած դպրոցում: Ծրագիրը խթան կհանդիսանա՝ փոխելու ավանդական ձևերով դասապրոցեսի անցկացումը. փոխարենը կկիրառվեն ՏՀՏ գործիքներ և նոր մեթոդներ: Ծրագիրը համարում ենք շարունակական, քանի որ մեր դպրոցում այն արդեն փորձարկվել է նախ «Կենսաբանություն» առարկայի, ապա երկրաչափության և աշխարհագրության դասերին: Փորձում ենք ներառել նաև տարրական օղակն ու այլ

առարկաներ: Մենք զուգակցում ենք Վիքիպեդիա հանրագիտարան-Նախագիծը՝ «Չորսական դասարան» մեթոդի և օնլայն գնահատման ծրագրի հետ»,- մեզ հետ զրույցում պատմում են Լեռնապատի միջնակարգ դպրոցի ուսուցչուհիները՝ ներկայացնելով այդ ուսումնական հաստատությունում ծրագրի կիրառության փորձը:

Նրանց խոսքով՝ նոր մյուսի պատրաստումն իրականացրել են հենց աշակերտները, որոնք ներկայացրել են Վիքիպեդիայում նախօրոք խմբագրած հոդվածը: Նյութը ներկայացվել է power point ծրագրով պատրաստած ցուցադրությամբ: Գնահատումը կատարել են ՏՀՏ գործիքների կիրառմամբ՝ quizzz և Kahoot: «Դասի արդյունքում Վիքիպեդիայում ավելացավ տվյալ մյուսի հետ կապված հոդված, որը հնարավորություն ընձեռեց ունենալ տվյալ թեմայի մասին հավելյալ տեղեկատվություն: Սա հնարավորություն է ընձեռում գնահատել բոլոր աշակերտներին, քանի որ դասին նրանք նախօրոք պատրաստվում են: Այս կերպ աշակերտը կգիտակցի, որ իր ցանկացած աշխատանք գնահատվում է, որն էլ կդառնա խթան առաջադիմության որակի բարձրացման համար»,- հավաստիացնում են լավագույնների շարքում ներառված «Վիքիդասարանի ստեղծումը՝ «Չորսական դասարան» մեթոդի կիրառմամբ» ծրագրի հեղինակները:

Յեղիսե ՅՈՎԱՆՆԻՍՅԱՆ

Edunetwork

Արտերկրում կրթություն ստանալու իրական հնարավորություն

Edunetwork-ը կրթական-խորհրդատվական կազմակերպություն է, որը համագործակցում է արտերկրի մի շարք հայտնի ուսումնական հաստատությունների հետ՝ հայ դիմորդներին առաջարկելով կրթական բազմազան ծրագրեր և աջակցություն: Կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունն արտերկրի կրթական հաստատությունների ընդգրկումն է ու ներկայացնում է՝ համաձայն թեկնածուի ներկայացրած տվյալների և պահանջների:

Edunetwork-ի համահիմնադիր է տնօրեն Սաթինե Ղարաբեշչյանի հետ զրույցել ենք կազմակերպության նպատակների և տրամադրվող ծառայությունների շուրջ: Նրա խոսքով՝ Edunetwork-ն այն բացառիկ ընկերություններից է, որին Հայաստանում և ԳՀԿ սահմաններից դուրս վստահում են ամենաառանցքայինը՝ կրթությունը: «Կարելի էր կրթությունը սահմաններից դուրս և գնահատելով որակյալ կրթությունը՝ մեզ մոտ գաղափար առաջացավ ստեղծել մի կամուրջ, որի միջոցով դիմորդները հնարավորություն կունենան ծանոթանալ արտերկրում ուսումը շարունակելու հնարավորություններին: Մենք ձեռավորվել ենք լայնածավալ կրթական ցանց, որի շնորհիվ աջակցում ենք յուրաքանչյուր դիմորդի՝

օգտվելու համաշխարհային կրթական համակարգի ընձեռած հնարավորություններից և կերտելու իր կայուն ապագան: Մեր համագործակցության աշխարհագրությունը մեծ է, ուղղությունները՝ բազմազան»,- մեզ հետ զրույցում նշում է Սաթինե Ղարաբեշչյանը՝ հավելելով, որ Edunetwork-ը համագործակցում է ԱՄՆ-ի, Կանադայի, Մեծ Բրիտանիայի, Չինաստանի, Արաբական Միացյալ Էմիրությունների և Եվրոպական մի շարք երկրների լավագույն ուսումնական հաստատությունների հետ: Ըստ մեր զրուցակցի՝ համապատասխան համաձայնագրով կազմակերպությունը համդիսանում է արտերկրի ավելի քան 100 բուհի ներկայացուցիչը և ծրագրերի տարածողը տարածաշրջանում:

Դիմորդներին տրամադրվում է ամբողջական ծառայությունների փաթեթ, որի մեջ ներառվում է համալսարանների հետազոտություն, ձեռնարկների լրացում, փաստաթղթերի հավաքագրում, մոտիվացիոն նամակի պատրաստում, երաշխավորագրերի կազմում ընդհուպ մինչև վիզայի տրամադրման աջակցություն: «Մենք ջանք ու եռանդ չենք խնայում՝ յուրաքանչյուր օր ընդլայնելու մեր համագործակցության սահմանները: Ունենք փորձառու մասնագետներ, որոնք մեզ հետ աշխատում

են արտերկրից և Հայաստանի թիմի երիտասարդ անդամներ, որոնք ժամանակակից միջոցներով դիմորդների համար հնարավորություն են ստեղծում հասնել իրենց երազանքին: Մեր սաները ստանում են իրենց պահանջներին համապատասխան կրթական ծրագրով արտերկրում ուսանելու հնարավորություն, ձեռք բերում նոր կապեր, գիտելիք ու փորձառություն՝ իրենց նախընտրած ոլորտում կիրառելու համար, զարգացնում լեզվական և մասնագիտական հմտությունները, ինչպես նաև տվյալ երկրի մշակույթն ու ավանդույթները ուսումնասիրելով՝ կառուցում միջազգային համագործակցության նոր կամուրջներ»,- մեզ հետ զրույցում ասում է Edunetwork-ի տնօրենը:

Ըստ Սաթինե Ղարաբեշչյանի՝ Edunetwork-ն աջակցում է նաև արտերկրի միջին, ավագ դպրոցների, բակալավրի, մագիստրատուրայի, PHD և այլ ծրագրերի կրթաթոշակների դիմելու հարցում: Որոշ կրթաթոշակներ կազմակերպությունը հայտարարում է նախապես, իսկ որոշների դեպքում բուհական ընդունելությունից հետո օգնում է ուսանողին դիմելու և ստանալու կրթաթոշակ: Կազմակերպությանը կարող են դիմել նաև արտերկրի կարճաժամկետ ծրագրերին մասնակցելու աջակցությամբ հարցով. Edunetwork-ը

կազմակերպում է կարճաժամկետ ծրագրերի ամառային, գարնանային, աշնանային և ձմեռային դպրոցներ: Մեր զրուցակիցը փաստում է հիմնականում համագործակցում են արտերկրի բուհերի հետ, սակայն աշխատում են նաև ՀՀ ուսումնական հաստատությունների հետ: Մասնավորապես արտերկրի և ՀՀ բուհերի միջև ծրագրեր, որի արդյունքում տրամադրվում է երկու բուհի դիպլոմ: Գործընթացն իրականացվում է միջբուհական համաձայնագրի շրջանակում՝ Edunetwork-ի աջակցությամբ, քանի որ առկա են մի շարք հարցեր՝ կրեդիտների փոխճանաչում և այլն:

Սաթինե Ղարաբեշչյանի խոսքով՝ քանի որ կազմակերպությանը դիմող ուսանողները հետաքրքրված են կրթաթոշակային ծրագրերով, իսկ և՛ Հայաստանում, և՛ ԳՀԿ դուրս շատ հայտնի են էրազմուսի կրթաթոշակային ծրագրերը, այդ նպատակով Edunetwork-ը որոշել է համագործակցել էրազմուսի ուսանողական ցանցի հետ, որպեսզի մեկ օր առաջ ուսանողներին իրագրել են այդ հնարավորությունների մասին: «Մեր գործընկերները եւս փաստում են, որ մեր կազմակերպության միջոցով էրազմուսի կրթաթոշակային ծրագրերի մասին տեղեկատվության տարածումը օգտակար կարող է լի-

նել: Մենք անում ենք հնարավոր, որպեսզի ուսանողներն իրապես տեղյակ լինեն այդ ծրագրերի մասին և անկախ իրենց սոցիալական վիճակից՝ կարողանան դիմել և ուսում ստանալ արտերկրի լավագույն համալսարաններում»,-չեշտում է մեր զրուցակիցը և հավաստիացնում, որ այդպիսով էրազմուսի ծրագրերը հասանելի կլինեն ուսանողների մեծ շրջանակի:

«Այսպիսով՝ հաշվի առնելով միջազգային մարտահրավերները և գիտելիքի փոխանցման կարեւորությունը՝ մենք ցանկանում ենք մեր դիմորդներին տալ հնարավորություն ձեռք բերելու կյանքը փոխող փորձառություն և, ամենակարևորը, այդ փորձառությունը դարձնել հասանելի բոլորի համար: Մեր սաների վստահությունը ոգեշնչում է մեզ օրեցօր զարգանալ և կատարելագործել մեր ծառայությունները, նպաստել միջազգային կրթական համակարգի հասանելիությանը և արդյունքում ունենալ որակյալ մասնագետների աճ ու տեսանելի բարեփոխումներ ամենատարբեր բնագավառներում: Այլ խոսքով՝ կամուրջ հանդիսանալ դիմորդի ու միջազգային կրթական աշխարհի միջև և նպաստել կրթության ոլորտում երազանքների իրականացմանը»,- փաստում է Edunetwork-ի համահիմնադիր և տնօրեն Սաթինե Ղարաբեշչյանը:

«Այբ» կրթական հիմնադրամ

Սերոդ

Գիտատունը միավորել էր նախագծային կրթության սիրահարներին

Դարձվածքները հովհաննես Թումանյանի «Հառաչանք» պոեմում

Երիտասարդ գիտնականներին եւ ստարտափների ներկայացուցիչներին մեկ դահլիճում էր միավորել նախագծային կրթությունը:

«Այբ» կրթական հիմնադրամը եւ «Կենսաբանների հայկական միությունը» նախաձեռնել էին «Գիտատունը դեպի հիբրիդային կրթություն» միջոցառումը՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, ՄԱԶԾ «Կոլբա» լաբի «Ապագան այսօր. կանանց, երիտասարդների եւ երեխաների հզորացում» համուն Հայաստանում ժողովրդավարության ամրապնդման» ծրագրի շրջանակում: Նպատակը երիտասարդների համար գիտությունը գրավիչ դարձնելն էր:

«Կենսաբանների հայկական միություն» ՀԿ համահիմնադիր Արսեն Գասպարյանը ամփոփեց «Կենսաբանների հաջորդ սերունդ» ծրագիրը, որի շնորհիվ երիտասարդները ստացել են նախագծային կրթություն եւ իրականացրել հետազոտություններ ու նախագծեր:



Ծրագրի շահառուները ներկայացրին իրենց կատարած հետազոտությունները, որոնք վերաբերում էին ամենատարբեր թեմաների, ինչպես օրինակ՝ Հայաստանի ջրային էկոհամակարգերի եւ պեպտիդների հակավիրուսային ազդեցության թեմաներն էին:

Ծրագրի ընթացքում «Այբ» կրթական հիմնադրամի գործադիր տնօրեն Սոնա Կոչեցյանը ներկայացրեց հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ հիբրիդային կրթություն» անվճար ծրագիրը, որի հիմքում եւս նախագծային կրթության մոդելն է, ծրագիրը հիմնված է «սովորողի անելով» կարգախոսի վրա: Տասներորդիները ծրագրի շնորհիվ կարող են գործով ուսումնասիրել իրենց նախընտրած բնագիտական առարկան՝ ընտրել իրական կյանքի որեւէ խնդիր, փորձել գտնել դրա լուծումը:



Միջոցառման ընթացքում իրենց հաջողության պատմությունները ներկայանրեցին հետ կիսեցին ստարտափների ներկայացուցիչները՝ նշելով, որ նախագծային կրթությունը լավ հիմքեր է դնում հետագայում սեփական բիզնես-նախաձեռնության համար:

«Այբ» հիմնադրամի նոր նախաձեռնությունը՝ Հայաստանի եւ Արցախի 10-րդ դասարանցիների համար անվճար «Այբ» հիբրիդային կրթությունը մեկնարկում է 2022-ի հունվարից: Ծրագրին մասնակցելու համար կարելի է գրանցվել մինչեւ 2021 թվականի նոյեմբերի 21-ը:

«Այբ» կրթական հիմնադրամ

Դարձվածքներն առօրյա, ժողովրդախոսակցական ոճին բնորոշ բառային միավորներ են, որոնք յուրաքանչյուր ժողովրդի ազգային մտածողությունը, տվյալ ժողովրդի լեզվամտածողությունը դրսևորող լեզվական միջոցներ են, որոնց շնորհիվ արտահայտվում են տվյալ ժողովրդի բարքերն ու սովորույթը, կենցաղն ու արելակերպը: Դարձվածքները միեւնույն ժամանակ յուրաքանչյուր անհատի ազգային մտածողությունն են արտահայտում: Մեծ է ու բազմաբնույթ դարձվածքի ոճական արժեքը՝ գեղարվեստական խոսքում, այն, նախ եւ առաջ, պատկերավոր ու տպավորիչ է դարձնում խոսքը, նպաստում նրա հակիրճությանը ու սեղմությանը, ազգային երանգավորում հաղորդում եւ հեղինակի, ե՛լ՝ կերպարների խոսքին, բացահայտում նրանցից յուրաքանչյուրին բնորոշ լեզվամտածողությունը:

Դարձվածքները հաճախ նպաստում են ավելի տեսանելի դարձնելու եւ բացահայտելու առանձին անձանց, կերպարների հոգեվիճակը: Հայ գեղարվեստական խոսքը, առավելապես արձակն ու չափածոն հարուստ է թարմ ու ինքնատիպ, գեղեցիկ ու պատկերավոր դարձվածքներով, որոնք, կարելի է ասել, գեղարվեստական երկի ժողովրդայնությունն ապահովող լեզվական անգերազանցելի միջոցներն են:

Երբ խոսում են ժողովրդական լեզվի ու այն գրականության մեջ կիրառելու մասին, մեր գիտակցության մեջ առաջին հերթին հղանում է Հովհաննես Թումանյանը: Թումանյանի մեծության գաղտնիքն ոչ միայն ստեղծագործությունների թեմատիկայի, գաղափարախոսության, այլև նրա արվեստի մեջ է, ինչպես եւ վերջինիս հմայքը ոչ միայն նրա արտահայտչական միջոցներն ու հնարքներն են, այլև նրա զարմանալիորեն կենդանի, պարզ ու հյուսիս լեզուն, լեզու, որը մեր իրականության մեջ կոչվում է թունանյանական լեզու:

Թումանյանն իր գրական գործունեության հենց սկզբից ունեցավ իր նպատակադիր սկզբունքը լեզվի հարցում, որին հավատարիմ մնաց մինչեւ կյանքի վերջը: Որ գրական լեզվի ժողովրդայնությունն է: Թումանյանի համար, իր բառերով ասած, ժողովուրդը «ծով է, ծով», որից պետք է օգտվի գրողը, եւ Թումանյանը այն համարձակներից մեկն էր, որն այդ ծովից սեփական գավաթով առատորեն խմեց իր բաժինը: Ժողովուրդը Թումանյանի համար ոչ միայն ստեղծագործության շտեմարան է, այլև գրողի ամենամանաչառ ու ամենախստապահանջ զննատողը: Թումանյանը գրել է. «Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության եւ էության ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմության եւ հեռավոր անցյալի կախարդական բանակին, հոգեկան կարողությունների ամենածոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը»:

Թումանյանի լեզվի ամբաժան մասն ու հարստությունն են կազմում ժողովրդական առածներն ու ասացվածքները, եւ, իհարկե, դարձվածքները: Քանի որ նրա ստեղծագործությունների մեծամասնության մեջ գլխավոր հերոսը հասարակ գյուղացին է, ուստի հասարակ գյուղացու խոսքը համեմված է ամենատարբեր դարձվածքներով:

Հ. Թումանյանի «Հառաչանք» պոեմը ողողված է ամենատարբեր դարձվածքներով: Այն գրվել է 1890 թվականին: Պոեմի նյութը 1880-ական թվականների

երկրորդ կեսին Դսեղի շրջակայքում երեւան եկած «Պաշտպան» չոփուռի տղաների պատմությունն է: Պոեմն ունի սոցիալական ուղղվածություն: «Հառաչանք»-ի հերոսը ծերունին է, որին այցելության է եկել երիտասարդը: Ծերունու եւ երիտասարդի գրույցից պարզ է դառնում հայ գյուղի սոցիալական ծանր վիճակը: Ծերունու շուրթերով ժողովուրդն է խոսում, հենց այդ պատճառով էլ Թումանյանի հերոսի խոսքը համեմված է ժողովրդական առած-ասացվածքներով, թեւավոր խոսքերով, դարձվածքներով: Երիտասարդի հետ հանդիպման առաջին իսկ պահից ծերունին ներկայացնում է իրենց ծանր վիճակը՝ օգտագործելով դարձվածքներ:

Նրա ետեւից անխոս գրնացի, Փրնթինթաքնում էր նա իմ առաջին - Մեր բանը պրծավ, երբ էս ծորերի Ստերը սրանք էլ եկան սովրեցին:

Բանը արծնել - վերջին հույսը հատել իմաստն է արտահայտում (դարձվածաբանական սերտաճման օրինակ է):

Սա էր մնացել, սա էլ անպատճառ Մեր գլխին մի նոր կրակ է բերում...

Գլխին կրակ բերել - փորձանք դառնալ, արհավիրք ստեղծել (դարձվածաբանական միասնության օրինակ է):

Եկած կլինի, որ խաբար տանի, թե խելքը գլխին դեռ քանի գյուղ կա...

Խելքը գլխին - խելացի, բանիմաց (դարձվածաբանական միասնության օրինակ է):

Ով յուր դռանը անասուն ունի, Կամ որի կնգա աչքերում յուղ կա...

Կնոջ աչքերում յուղ լինել - ժողովրդական դարձվածք, արտահայտում է երիտասարդ, ցանկալի լինելու իմաստը (դարձվածաբանական սերտաճման օրինակ է):

Լռեց ծերունին ծանրը տնքալով Ու առաջ գնաց թին դիմար տալով...

Դիմար տալ - ժողովրդական դարձվածք, հենվել, կռքնել (դարձվածաբանական սերտաճման օրինակ է):

Թե որ ծեռներս էլ մի բան է ընկնում, Չենք կարողանում բերան հասցրենք...

Եսքան տանջվելով քրտինք ենք անում, էլ են սեւերեսս, էլ են ասվածն ենք...

Բերան հասցնել - ուտել, կերակրվել (դարձվածաբանական սերտաճման օրինակ է):

Քրտինք անել (թափել) - տանջվել, չարժարվել (դարձվածաբանական կապակցության օրինակ է):

-Մեր նեղությունը... քեզ ինչպե՞սս հայտնեն,

Թող հաստատ լինի մեր թագավորը, Ես ընչի տեր եմ, խոսեմ նրա դեմ, Բայց աստված կտրի մեր քաշած օրը...

Աստված կտրի մեր քաշած օրը - վերջ տալ տանջանքներին (դարձվածաբանական կապակցության օրինակ է):

Երեք թագավոր, ասում են, իբրեւ, Խելքս չի կտրում, որ էպես լինի, Խորհուրդ են արել, որ այսուհետեւ Իր թախտից զըրկվի, ով կռիվ ունի:

Խելքը չկտրել - չհասկանալ, չըմբռնել, գլուխ չհանել (դարձվածաբանական սերտաճման օրինակ է):

Թախտից զրկվել - գահընկեց արվել (դարձվածաբանական սերտաճման օրինակ է):

Ես քեզ օրինակ: Ես խոր ծորերում Ես է չորս քսան տարիս լըրացավ, Ոչ մի խնդություն տեսա իմ օրում, Ոչ էլ մի անգամ աչքս լիացավ...

Աչքը լիանալ - գոհանալ, հագեցալ (դարձվածաբանական սերտաճման օրինակ է):

Վազներից էնքան օգուտ չի գալիս, Ինչ նրանց համար ես փող եմ տալի, Գըլուխը քարը, գոնե փող լինեք, Էլ ինչու էսքան մարդ գանգատ կանեն...

Գլուխը քարը - այլևս մեկ լինել, չխառվել ոչնչի (դարձվածաբանական սերտաճման օրինակ է):

Գանգատ անել - դժգոհել (դարձվածաբանական կապակցության օրինակ է):

Թե տանուտերին գանգատ եմ գնում, Բան չեմ վաստակում բացի դուշմանից,

Հողերի հետքը իր տունն է տանում, Համեցե՛ք դիվան ուզիր սըրանից...

Դիվան ուզել - դատաստան պահանջել (դարձվածաբանական կապակցության օրինակ է):

Մի օր էլ եկավ, թե չորան Չատին Ոչխարը թաքուն իմ հաղն է քաշել, Չատին էլ կուլ չի զընաց թավադին.

- Թող զա մի տեսնենք - էր ով է տեսել...

Կուլ չգնալ - չհնազանդվել, ընդդիմանալ (դարձվածաբանական սերտաճման օրինակ է):

Եկան իրարու, խոսք խոսքի հասավ, Չատին մի քանի կոշտ խոսքեր ասավ,

Դե մարդիկ երբոր կռիվ են անում, Մեջտեղ փըլավ չեն իրար բաժանում...

Կռվում փլավ չբաժանել - կռվի մեջ լավ բան չկա (դարձվածաբանական կապակցության օրինակ է):

Եկավ էս Չատինս հաչիցը կապեց, Ինչքան որ գիտես՝ քո ասած թակեց, Թե՛ պետք է կորցնեն քեզ էնքան հեռու,

Որ էլ չտեսնես արեւը Լոռու...

Արեւ չտեսնել - մեռնել, կորսվել (դարձվածաբանական սերտաճման օրինակ է):

Մեր մեջ մի քանի ծեր մարդ ընտրեցինք,

Գնացինք թավադի ոտը խընդիրքով, Ինչքան որ տվինք, ավել խընդրեցինք -

Բանը վերջացնի գողական կարգով... Ոտքը գնալ - խնդրանքով դիմել (դարձվածաբանական սերտաճման օրինակ է):

Ով է մեղավոր: Միտք եմ անում, միտք, Մի չեմ հասկանում ով է մեղավոր...

Միտք անել - մտածել (դարձվածաբանական կապակցության օրինակ է):

Բայց իմ կարճ խելքով էնքան են տեսնում-

Ապրիլ չի լինիլ էպես ամեն օր...

Կարճ խելք - ոչ բանիմաց, կիսագրագետ լինել (դարձվածաբանական կապակցության օրինակ է):

Այսպիսով, Հովհաննես Թումանյանի «Հառաչանք» պոեմը հարուստ է դարձվածքներով: Այս հանգամանքը կապված է պոեմի բովանդակություն հետ: Գլխավոր հերոսը տարիքն առած ծերունին է, ում խոսքը համեմված է ամենատարբեր ժողովրդական դարձվածքներով: Այդ դարձվածքները արտահայտում են ժողովրդի կենսափորձը, կոլորիտը, ժամանակն ու միջավայրը:

(Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, հատոր 5, Երեւան, 1945)

Նազենի ԱՍՏՐՅԱՆ հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի, քաղաք Սեւան

Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա-100

Պատանդներ հայ երգչախմբային արվեստի պատմության էջերից

Հայ ժողովրդի մշակույթի բաղկացուցիչ մասը կազմող երաժշտությունը սկիզբ է առել իր հետ միասին, անհիշելի ժամանակներից և որպես ժողովրդի ստեղծագործ մտքի գեղարվեստական արտացոլում՝ սերունդների միջոցով եկել հասել է մինչև մեր օրերը:

Հայ ժողովրդի բազմահարուստ ճարտարապետությունը, բանափայտությունը գիրք ու գրականությունը, մանրանկարչությունը և կիրառական արվեստը, պատմական և ճանաչողական խոշոր նշանակություն ունեցող մատենագրությունը, ինչպես նաև միջնադարյան գողտրիկ տաղերն ու զանգեղ իրենց կենսունակությամբ դիմացել են ժամանակի փորձություններին ճիշտ այնպես, ինչպես նրանց ստեղծողը՝ տաղանդավոր հայ ժողովուրդը: Բազմապիսի է հայ ժողովրդի երաժշտական մշակույթը նրա զարգացման տարբեր շրջաններում:

Հայ երգչախմբային արվեստը, որ սկիզբ է առել անհամեմատ ավելի ուշ շրջանում, սերտորեն կապված է մեր ժողովրդի ընդհանուր և առանձնապես երաժշտական մշակույթի հետ և բխում է նրանից:

Այս հարցը թեկուզ են ակնարկային հակիրճությամբ քննության առնելիս, բնականաբար, պետք է նկատի ունենալ հայ երաժշտական մշակույթի զարգացման տարբեր շրջաններ և մասնավորապես 19-րդ դարի երկրորդ կեսը, մինչև մեր ազգային պրոֆեսիոնալ-կոմպոզիտորական նոր դպրոցի կազմավորումը:

Հայ երգչախմբային կամ խմբերգային արվեստը զարգացման հետաքրքիր ճանապարհ է անցել և վաղուց արդեն անհրաժեշտ պահանջ է զգացվում երաժշտական մշակույթի այդ բնագավառը արժեքորոշման գրությունների, պատմական ակնարկների, և այլ բնույթի գիտահետազոտական ուսումնասիրությունների:

Հայտնի է, որ մինչև 9-րդ դարը հայկական ժողովրդական երաժշտությունը ավանդաբար փոխանցվելով սերնդից սերունդ, կերպարներն զբաղվում էին բանավոր վերապատման, անցել է զարգացման պատմական էվոլյուցիա, մի քանի հարյուրամյակների ընթացքում: Եվ միայն 9-րդ դարից Հայաստանում կիրառության մեջ մտած խազային նոտագրության միջոցով գրի են առնվել հոգեւոր և աշխարհիկ մեղեդիներ, տաղեր և երգեր: Կոմիտասի վկայությամբ հայկական խազային նոտագրության արվեստը ունեցել է իր զարգացման երեք հիմնական էտապները: Սակայն, հատկապես վերջին 2 հարյուրամյակների ընթացքում, խազային արվեստի գիտակ վարպետներն աստիճանաբար անհետանում են, իրենց հետ տանելով խազերը վերծանելու, կարողալու բանալին և չնայած հայ երաժիշտների ավելի ուշ շրջանի խազային արվեստի վերածանման ուսումնասիրությունների բայց և այնպես հայկական տաղերով կատարված ծայնագրությունները դեռևս հիմնականում անընթեռնելի են և անմատչելի մեզ համար:

Հայ պատմիչների վկայությամբ՝ խմբովին, բայց և ունիտոն երգեցողությունը գոյություն է ունեցել հին ուրարտական ժամանակաշրջանից, էլ չենք խոսում 5-րդ դարում Մ.Խորենացու և Փ.Քյուրապետի նկարագրած հեթանոսական հուղարկավորությունների ու ծեսերի մասին, որոնք մեծապես կատարվել են խմբովին: Այսպիսով կարելի է պնդել, որ խմբով երգելու մշակույթը դեռ պատմական վաղ ժամանակաշրջանից, տարածված է եղել Հայաստանում: Դրա լավագույն վկայություններն են ժողովրդական, յուրատեսակ թատերականացված մասսայական տոնախմբությունները (Վարդավառ, ծաղկաքաղ, Տրոնեզ, Ջանգյուլում) և այլ ժողովրդական ու եկեղեցական ծիսակատարություններ, որոնք աստիճանաբար պատմական զարգացման ընթացքում

մոնոդիկ երգեցողությունից փոխանցվել են ապա ծայնագրության և իմիտացիոն-բազմաձայնության էվոլյուցիայի միջոցով հասել են մեր ժամանակակից բազմաձայնությանը՝ ամենից առաջ երգչախմբային բազմաձայն մշակույթի ներկա օրինակափայտությանը:

Բազմաձայն երգեցողության ամենատարրական ձևը՝ ծայնագրությունը, մեր ժողովրդի կենցաղի մեջ մուտք է գործել շատ դանդաղ, դա եղել է երկարատև մի գործընթաց, որը պատմական ավելի ուշ շրջանում տվեց իր ցանկալի արդյունքները: Եվ 19-րդ դարի 60-ական թվականներից պրոֆեսիոնալ-կոմպոզիտորական արվեստի ստեղծմամբ հայկական երաժշտության զարգացման մեջ նշանակալից բեկում է կատարվում և տեղի է ունենում երաժշտական մոնոդիկ ձևերի բազմաձայնության վերածելու գործընթացը: Օրինաչափ գործընթացը իր հետ բերեց ինչպես երգչախմբային մշակույթի, այնպես էլ բազմաձայնությանն անցնելը, որը պայմանավորված էր 19-րդ դարում ինչպես հայ գրականության մեջ տեղի ունեցող վերելքի, այնպես էլ արվեստի մյուս բնագավառների զարգացման տեղաշարժերի հետ:

19-րդ դարի կեսերին Արեւելյան և Արեւմտյան Հայաստանում նկատելի աշխուժություն է զգացվում հանդեպ ժողովրդական բանափայտությունը, երաժշտական ֆոլկլորը: 19-րդ դարի առաջին կեսին հիմնադրված մի շարք դպրոցներ ու մշակույթի օջախներ նշանակալից դեր են խաղացել մեր մշակույթի զարգացման և առաջընթացի գործում:

Դրանց թվին են պատկանում Մոսկվայի Լազարյան ճեմարանը (1815թ.), Թիֆլիսի Լեոնիդյան դպրոցը (1824թ.), որտեղ հայ մշակույթի գործիչների հետ միասին աճել ու դաստիարակվել են հայ կոմպոզիտորների և երաժշտական գործիչների մի զգալի սերունդ, որոնք նշանակալից դեր են խաղացել մեր երաժշտական և հատկապես խմբերգային արվեստի զարգացման գործում:


Այդ, ինչպես նաև ավելի ուշ, 19-րդ դարի 2-րդ կեսին կազմակերպված էջմիածնի Գեւորգյան ճեմարանը (1874թ.) հանդիսացել են յուրատեսակ մշակութային օջախներ, որտեղ կրթվել և դաստիարակվել են բազմաթիվ բանիմաց երաժշտական կադրեր՝ առանձնապես աչքի ընկնող երգիչներ և խմբավարներ:

Հայ երաժշտական արվեստի, մասնավորապես՝ մինչխորհրդային շրջանի խմբերգային արվեստի զարգացման պրոցեսում ակնհայտ է Ներսիսյան դպրոցի և Գեւորգյան ճեմարանի դերն ու նշանակությունը: Այդ շրջանի գրեթե բոլոր կոմպոզիտորները եղել են նաև հայտնի խմբավարներ և նրանց մեծ մասի գործունեությունը պայմանավորված է եղել երգչախմբերի հետ, սակայն զարմանալից այն է, որ նրանց գերակշռող մասը եղել է դիրիժոր խմբավար առանց համապատասխան խմբավարական-դիրիժորական կրթության:

Այդպիսի երգչախմբերից են Կարա-Մուրզայի, Մակար Եկմալյանի, Կոմիտասի, Գրիգոր Սյունու, Սպիրիդոն Մելիքյանի և ուրիշների ստեղծած, կազմակերպած և ղեկավարած երգչախմբերը:

Բացի այս, հայ բազմաձայն, խմբերգային արվեստի սաղմնավորման ու կազմավորման գործին զգալի չափով խթանել են նաև արեւմտահայ երաժիշտների բավական գործունյա մի հատված՝ այդ անհատներն էին Համբարձում Լիմոնջյան, Գաբրիել Երանյան, Եղիա Անտեսյան, Նիկողայոս Թաշյան, Արիստակես Հովհաննիսյան:

Այս անունների մեջ առանձնանում է ականավոր կոմպոզիտոր, երաժշտա-հասարակական գործիչ Տիգրան Զուխաջյանը, որն իր արվեստին նվիրված մի առաքյալ էր:



Հայ երաժշտական մշակույթը հատկապես նրան է պարտական այն բանի համար, որ նա իր ժամանակակիցներից ավելի հմտորեն օգտագործեց արեւմտաեվրոպական դասական երաժշտության հարուստ փորձը և այն ծառայեցրեց երաժշտական մշակույթի զարգացմանը:

Հայ երաժշտության առաջին դասական ծնվեց Կոստանդնուպոլսում, երաժշտական գիտելիքները կատարելագործեց Միլանում: Հենց այստեղ էլ նա ստանում է երաժշտական պրոֆեսիոնալ գիտելիքներ, ձեռնարկում որպես կոմպոզիտոր:

Վերադառնալով Պոլիս՝ Տ.Զուխաջյանը մի շարք երաժշտության անձամբ օժանդակությամբ կազմակերպվում է առաջին պրոֆեսիոնալ երգչախումբը, հայտնաբերում երգիչներ, ղեկավարում սիմֆոնիկ նվագախումբ: Երգահանը սերտորեն կապվում է ազգային թատրոնի հետ, երաժշտություն գրում թատերական ներկայացումների համար՝ Տ.Զուխաջյանի «Արա Գեղեցիկ կամ Սեր և հայրենիք», Ռ.Սերեֆյանի «Վարդան Մամիկոնյան փոկիչ Հայրենյաց» և այլն:

Այդ մթնոլորտում Տ.Զուխաջյանը հղացել է հնուտ վարպետությամբ մարմնավորեց իր խիզախ և գեղեցիկ ծրագրերից մեկը՝ ազգային օպերա ստեղծելու գաղափարը: Դա «Արշակ Երկրորդ» պատմահայրենասիրական օպերան է, լիբրետոն Թ.Թերզյանի: Սա հայկական առաջին օպերան է, ուր կերպավորվում է հայոց պատմության 4-րդ դարի դրամատիկական դրվագներն ու ողբերգական բախումները:

Ժողովուրդը՝ երգչախումբը «Արշակ Երկրորդ» օպերայում ունի իր տեղն ու դերը և պատահական չեն ժողովրդա-մասայական տեսարանները՝ որոնք ներկայանում են երգչախմբի միջոցով՝ մի դեպքում կանանց, մի այլ դեպքում տղամարդկանց խմբերգերով իսկ ավելի հաճախ երկսեռ երգչախմբերով այն հասցնելով բեմական-երաժշտական մոնումենտալ մասշտաբների:

Տ.Զուխաջյանը հանդիսացավ առաջին հայ երաժշտական այն գործիչը, ով 19-րդ դարի 60-70-ական թվականներին իր պրոֆեսիոնալ խորը և բազմակողմանի գիտելիքներով ու երաժշտական-հասարակական գործունեությամբ ոչ միայն ամբողջացրեց, իմի բերեց իր նախնիների և ժամանակակիցների ստեղծագործական, կատարո-

ղական, կուլտուր-մասայական աշխատանքի փորձը, այլև իր խանդավառ ու բեղմնավոր ստեղծագործական գործունեությամբ եղավ առաջին հայ պրոֆեսիոնալ կոմպոզիտորը, որ հիմք դրեց հայկական առաջին օպերաներին և օպերետներին:

Իսկ խմբերգային բազմաձայն երգեցողությունը ծնունդ առավ 1885թ. Մարտի15-ին Քրիստափոր Կարա-Մուրզայի ղեկավարած քառաձայն խմբի պատմական համերգով, որը տեղի ունեցավ Թիֆլիսում:

19-րդ դարի 2-րդ կեսի հայ երաժշտության պատմության մեջ ամենանշանավոր գործիչներից մեկն էր Ք. Կարա-Մուրզան: Նրա գեղարվեստական հայացքների և ստեղծագործական սկզբունքների կազմավորման գործում դրական նշանակություն ունեցավ ծանոթությունը հայ գրականության և արվեստի գործիչներ՝ Րաֆֆու, Գ.Սունդուկյանի, Ղ.Աղայանի, Գ.Բաշինջաղյանի և այլոց հետ, ում խորապես հուզվում էր ազգային մշակույթի ճակատագիրը: Նշված երախտավորները ջերմորեն պաշտպանեցին Կարա-Մուրզայի արժեքավոր նախաձեռնությունը՝ քառաձայն երգչախմբի ստեղծման, ժողովրդական երգի մշակման, հայ ժողովրդի ամենալայն շրջաններում բազմաձայն երգի հանրայնացման գործը:

Այս հասունացած ու բարդ խնդրի լուծման ուղղությամբ կատարած առաջին լուրջ քայլը բազմաձայն երգչախմբի կազմակերպումն էր և նրա պատմական դարձած առաջին համերգը, որը իբրև պատմական իրադարձություն մտավ հայ երաժշտության պատմության մեջ:

Հիրավի, Քրիստափոր Կարա-Մուրզան առաջինն էր, ում վիճակված էր բազմաձայն խմբերգային արվեստի դրոշմ կրելու, որպեսզի այն համընդհանուր իր հետնորդ ներքին Մակար Եկմալյանին և առանձնապես Կոմիտասին: Այս երկու մեծերը տարան և զարգացրին Կարա-Մուրզայի թողած լավագույն ավանդույթները, հայ խմբերգային արվեստը բարձրացնելով մի նոր՝ ավելի բարձր վարպետության:

Այդ նույն ժամանակահատվածում Դրիմի հայկական զաղութում դեռ վաղ մանկությունից դրսևորվում է արտակարգ ընդունակություններով օժտված՝ ոչ միայն երաժշտության, այլև գրականության և նկարչության բնագավառներում Ալեքսանդր Սպենդիարյանը: Դաշնակահարուհի մոր ազդեցությունը շատ ուժեղ էր: Պատանի Ալեքսանդրը նվագում է դաշնամուր, ջութակ, սկսում է ստեղծագործել: Բայց, ավարտելով Սիմֆերոպոլի գիմնազիան, 1890թ. ընդունվում է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, դառնում է ուսանողական սիմֆոնիկ նվագախմբի կոնցերտմայստերը:

Մոսկվայում ուսանելու տարիներին Սպենդիարյանը չվիվում է հայ և ռուս նշանավոր մտավորականների հետ, հաճախում օպերային ներկայացումներ ու համերգներ: Հատկապես կարևոր էր նրա շփումները մտավորականների, բանաստեղծների, երաժիշտների հետ (Ալ.Ծառույան, Վ.Սուրենյանց, Մ.Գրիկ, Ֆ.Շալապախյան):

Սպենդիարյանը Պետերբուրգում իր ստեղծագործությունների ձեռագրերի մի մասը, մեծ հուզմունքով ներկայացնում է ռուս նշանավոր կոմպոզիտոր Ռիմսկի-Կորսակովին: Արժանանալով կոմպոզիտորի ջերմ դրվատանքին՝ մեծապես ոգեւորված Ալ.Սպենդիարյանը համոզվում է իր ուժերի մեջ և որոշում է ամբողջովին նվիրվել երաժշտական ստեղծագործությանը:

(Հարունակելի)
Դավիթ ՂԱԶԱՐՅԱՆ
Հայաստանի երաժշտական
ընկերության նախագահ,
Պրոֆեսոր

Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ
Աշուն

Ղեղնած դաշտերին
Իջել է աշուն,
Անտառը կրկին
Ներկել է նախշուն:
Պաղ-պաղ մեզի հետ
Փըջում է քամին,

Քշուն է տանում
Տերեւը դեղին:
Տըխուր հանդերից
Մարդ ու անասուն
Քաշվում են կամաց
Իրենց տունն ու բուն:

Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ

Պաղ-պաղ փըջեց աշնան քամին,
Ուռինները դող առան.
Տերեւները չոր ու դեղին
Տխուր, տխուր վար ընկան:

Մենակ ազոավն ծառի ճյուղին
Լուռ ծըվարեց սեւ հագած.
Ախ, մեկ էլ ես ձեռքս ծոցիս՝
Աչքս ձեր դռան մնաց:



Եղիշե ՉԱՐԵՏՑ

Քամին

Քամին,
Աշնան քամին
Թոցնում է դեղին մոխրագույնը իրա:

Ինչ-որ մի տեղ հիմա
Հավաքել է ի մի
Ու փշում է աշնան հոգեվարքի ժամին
Իր առեւելի հոգին մի վիթխարի բերան:

Քամին,
Աշնան քամին
Հոնդում է հիմա.
Փոշու հսկա դեզեր փախցնում են իրար
Սարսափահար դարձած նախիրների նման:

Քամին,
Աշնան քամին...
Քաղաքը գորշ ու մութ:
Ամեն անցորդ դեղին գառանցանք է հիմի՛,
Որ իրիկվա մեզին երազվել է քամուն:

Փողոցները երկա՛ր,
Ու ձանձրալի, աշնան անձրեւների նման,
Փողոցները, որ կան,
Փողոցների ներկան,
Փողոցները՝ դաժա՛ն, անհրապույր, չարկան,-
Որքա՛ն, որքա՛ն, որքա՛ն ահավոր են հիմա:

Քամին,
Աշնան քամին
Մոլորվել է այստեղ.
Մահվան սարսուռ առած վիրավոր է նա մի:
Ու կարող է հիմա ամեն արգելք քանդել
Քամին,
Աշնան քամին...

Հոնդում է,
Փնջում,
Ահեղացունց ցնցում ցուցանակները չոր.
Ջրնգում են ահից պատուհաններն հնչուն,
Ու թռչում է քամին,- երկաթաթե թռչուն,-
Չարհուրելի, գազիր փողոցների միջով...

Խելյատույտ, անմարդ փողոցներում կորած,
Չարհուրելի ոխով ու զայրույթով իրա,
Որպես ոսոխ տեսած մի վիթխարի հովազ,
Հայացքներում՝ փոշի եւ արնամուժ ավազ,-
Քամին, աշնան քամին հարձակվում է ահա
Անօգնական կթած բուլվարների վրա:

Օ՛, բուլվարի հիվանդ ծառերը որք ու խենթ,
Ցնցոտիներ հագած պառավների նման,-
Ծվատում են նրանք դեղին մազերն իրենց,
Գլուխները ցնցում ու մորմոքում հիմա:

Ծառերը ծե՛ր, հիվա՛նդ,
Ծառերը ծուռ ու չոր,
Մուրացկանի նման ծառերը խեղճ ու մերկ.
Քամին ծեծում է ծեբ գլուխները նրանց
Ու ճչում է մահվան չարագուշակ ճչով.-
Երբե՛ք,
Երբե՛ք,
Երբե՛ք...

Օ, գթացե՛ք հիմա.
Այդ ծառերին՝ խաշված բուլվարներին ամա,
Օ, փրկեցե՛ք նրանց հարվածներից քամու,
Որ բերում է նրանց մահվան մորմոք ու մահ:

Օ, գթացե՛ք հիմա.
Լսե՛ք, լսե՛ք, լսե՛ք.-
Այս առեւելի, դաժան, հոգեվարքի ժամին՝
Պիտի դառնա, որ ձեր հոգիները խուժե՛.-
Քամին,
Աշնան քամին...



Վահան ՏԵՐՅԱՆ
Աշնան

Նորից անձրե՛ւ, մշո՛ւշ, ա՛մպ,
Թախի՛ծ անհուն, տխրա՛նք հեզ,
Աշուն, քեզ ի՞նչ քնքշությամբ,
Ի՞նչ խոսքերով երգեմ քեզ...

Հարազատ են իմ հոգուն,
Վհատության իմ խոնարհ
Եւ թփերը դողդոջուն
Եւ խոտերը գետնահար...

Քո մշուշը, քո ոսկի
Տերեւները հողմավար,
Դյուքանքը քո մեղմ խոսքի,
Արցունքները քո գոհար...

Եւ քո երգը թախծալի
Իմ սրտի երգն է, կարծես,
Աշուն, քաղցր ու բաղձալի,
Ի՞նչ խոսքերով երգեմ քեզ...

Համո ՍԱՀՅԱՆ
Աշուն

Աշնան օրերն են հասել,
Իջել է ամպը սարին,
Եւ հրաժեշտ է ասել
Կռուկը մեր աշխարհին:

Մերք մինչ երկինք է հանում,
Խառնում խոնավ ամպերին,
Մերք դեպի ծորն է տանում
Փռում գետի ափերին:

Բարդին էլ չի սոսափում
Արագիլի թեւի տակ,
Դեղին թերթեր է թափում
Առվակի մեջ կապուտակ:

Ծափ է տալիս ու պարում,
Գնում, գալիս... մի խոսքով,
Ձուգում է եւ զարդարում
Ճանապարհները ոսկով:

Կարմիր խարույկ է կարծես
Ծեր տանձենին անտառի,
Թվում է, թե մոտ վազես,
Ձեռք ու ոտքը կվառի...

Բլրի վրա, քարափին
Ամպի ստվերն է դողում,
Ու գնում ենք, մեր ճամփին
Աշնան ոսկին է շողում:

Քամին շատ էր թափառել,
Պարապ-սարապ, թեւը կախ,
Բայց արդեն գործ է ճարել,
Տեսեք, ինչքան է ուրախ:

Ոսկե ծովում այդ դեղին
Աշնան հերկերն են ծլում
Եւ ամպերից արելի
Վերջին շողերն են խլում:

Տեսեք, ինչպես է խաղում
Տերեւների հոգու հետ,
Նրանց վրա ծիծաղում,
Քշուն առաջ, բերում ես:

Տարածվում են դաշտով մեկ,
Բռնում ծոր ու սարալանջ...
Նրանք աշնան ոսկու մեջ
Գարնան ծիծաղն են կանաչ:



Գուրգեն ՄԱՀԱՐԻ
Չարենցի հետ

Հիշո՞ւմ ես, հիշո՞ւմ ես խշշում էր աշունը,
Չմեռն սպասում էր մերկ սարից անդին,
Բուլվարի ծառերը խշխշում էին,
Բուլվարը նման էր հիվանդի:

Մեր հոգնած երակների խողովակներով
Փչում էր աշնան քամին ցրտացուրտ,
Նա մերթ հեկեկում էր աղիողորմ
Ու մերթ էլ կատաղի ցնցում:

Նա ծվատում էր մացառ ու թուփ,
Հեկեկում խուլ ու տրտմաթախիծ,
Ամայի անտառում ու դեղնած դաշտում
Փնտրում էր գոնե մի ծաղիկ:

Անտառի տերեւներն էին խշխշում,
Մահաճուն դաշտերն ընդարձակ.-
Հիշո՞ւմ ես, հիշո՞ւմ ես՝ աշուն էր, ինչպիսի՛ աշուն,
Ամառը որքա՛ն շուտ անցավ:

Շուտ անցավ ամառը.- նա միրգ էր ու հասույթ,
Նա հասուն օրերի բեղո՛ւն նախօրե,
Բայց եկավ աշունը, եկավ թաց ու մահացուրտ.-
Օրեր իմ, օրեր իմ, օրեր իմ...

Լսո՞ւմ ես, լսո՞ւմ ես,- խշշում էր աշունը,
Չմեռն սպասում էր մերկ սարից անդին,
Երգերի ծառերը խշխշում էին,
Ծառերը նման հիվանդի:



Վահան ԹԵՔՅԱՆ

Կ'անձրեւե, տղաս

Կ'անձրեւե, տղաս... Աշունը թաց է,
Թաց աչքերուն պես խեղճ խաբված սիրույն...
Պատուհանն ու դուռը գնա գոցե
Եւ դեմըս եկուր մտիլ վեհագույն

Դռան մը ներքեւ գոց ճակատագրին...
Բայց կուլաս, տղաս... Մութին մեջ հանկարծ
Ծանրը արցունքներ աչքեդ կը գլորին...

Լռութեան մը մեջ... Կ'անձրեւե, տղաս...
Կ'անձրեւե՞ երբեմն հոգիիդ մեջ ալ,
Կը մտի՞ սիրտդ, եւ կողողղղա՞ս
Խորհելով պայծառ արեւին անցյալ,

Լաց անմեղութեան արցունքը անդարձ,
Լաց չգիտնալով, խեղճ, անգետ տղաս,
Խեղճ որսը կյանքին, ա՛հ, լաց, որ մեծնաս...

Վահագն ԴՎԱԹՅԱՆ

Աշնան բարակած ջրերը լալիս,
Աշնան ոսկին են իրենց հետ տանում,
Ու դուք, կռունկներ, անհայտից գալիս,
Դեպի անհայտն եք նորից հեռանում:

Կապույտ լույսով է հեռուն բռնկել,
Քամին մեծավոր մի ծուխ է բեկում,
Ու ձեր կանչի մեջ, չվող կռունկներ,
Ինչ-որ կարոտ է անվերջ հեկեկում:

Այնպես խաղաղ են երկիր ու երկինք,
Ամպերը այնպես ճերմակ ու թեթեւ,
Ու թվում է, թե բարդիները ձիգ
Ուր որ է պիտի սլանան եթեր:

Բայց աշնան բարակ ջրերը լալիս,
Աշնան ոսկին են իրենց հետ տանում,
Ու դուք, կռունկներ, անհայտից գալիս,
Դեպի անհայտն եք նորից հեռանում:

Կապույտը կտրած գնում եք անվերջ,
Ու աշնան ձեր չուն մնան է լալու...
Ինձ էլ տեղ պահեք ձեր երամի մեջ,
Կռունկներ, շուտով ես էլ եմ գալու...



Պարույր ՍԵՎԱԿ

Աշնանային վալս

Մի մոռացկոտ անձրեւ
Ու մի երկչոտ քամի
Դաշնագիր են կնքել մեկմեկու հետ՝
Բնավ չհարցնելով կամքն աշխարհի,
Ու գործի են անցել.
Շաղ են տալիս... տաղտուկ:

Տերեւները կրկին գործադուլ են անում,
Եւ ծառերի կանաչ գործարաններն արդեն
Էլ չեն արտադրում ո՛չ թթվածին,
Ո՛չ էլ դեղին շրշույն,-
Չե՛րն անհծած:

Ու ծվատված ձանձրույթն ամենքիս մեջ
Երագում է հիմա հնավաճառ միայն:
Ա՛խ, թե պատուհանից մեկի ձայնը խռպոտ
Խուժեր սենյակ.
«Չանձրո՞ւյթ, հին-մին ձանձրո՞ւյթ կառնեն»...

Եւ ամենքըս ենք հիմա կիսով մեծակ,
Եւ ամենքըս ենք հիմա կիսով տխուր՝
Յոգնած մեր իսկ բոլոր շարժումներից,
Եւ ձեւերից ամեն
Եւ մտքերից բոլոր...

Օղը հաստանում է մառախուղով,
Ու մշուշով երկինքն է ցածրանում.
Որ բարակի թելը համբերության
Ու վեր բարձրանալիս ճիչ ճնգոցով հատվի:

Եւ ամենքըս հիմա վատ բաներ ենք հիշում.
Եւ ամենքըս հիմա հոռետես ենք դարձել,
Ամե՛ն ինչից զզված,
Ձգված մաեւ մեզմից:
Եւ մեր քիթ ու մոթից քմծիծաղ է կաթում,
Ինչպես ամեն ծառից՝ կենտ-կենտ տերեւ,
Ինչպես ջրհորդանից՝ անձրեւաջուր կեղտոտ,
Քիվից՝ պղտոր կաթիլ,
Տոխա տաղտուկ՝ հոգուց...
Կաթո՛ւկ-կաթո՛ւկ-կաթո՛ւկ,-
Չե՛րն անհծած...

Այս մոռացկոտ անձրեւն ու այս երկչոտ քամին,
Տխրությունն այս բարակ եւ տաղտուկն այս պարարտ,
Նաեւ վատն ու հոռին
Պարագույզ են կազմել
Ու պարուն են-պարո՛ւն-պարո՛ւն հիմա
Մեր փողոցում,
Տանը,
Մեր սենյակում մեղլիկ:

Երկրագունդն է պարուն մույն վալսը հիմ ու նոր,
Տարվա եղանակներն անվերջ մույնն են պարուն,
Նույնն է պարուն կյանքը,
Նույնն է պարուն միտքը:
Այս ի՛նչ խեղճություն է,-
Չե՛րն անհծած...

Եվ ինչ է դեռ մնում, որ ի՛նչ անենք
(Չանձրույթ առնող չկա.
Մենք ամենքս ենք ծախող):
Չանձրույթի հետ կազմենք լավ պարագույզ
Ու պտղովենք մե՛նք էլ,
Մենք էլ պարենք
Խենթացնող այս վալսը՝ խենթի մամա,
Պարենք մեր անձկացած ու նեղացած հոգում,-
Ի՛նչ ուզում է լինի.
Չե՛րն անհծած...



Միսաք ՄԵԾԱՐԵՆՑ

Յովը

Պատուհանըս մատնահարեց ու անցավ,
Յովն հերարձակ աշունին.
Չարածըճի, ինչպես աղջիկ մը, ինչպես
Խաղընկեր մը՝ դըրան տոն մոռցրված՝
Պատուհանըս մատնահարեց ու անցավ,
Յովն հերարձակ աշունին:

Իր ետեւեն կը վազեմ ես շնչահատ,
Ու շըվարուն ու հոգնած.
Ինք խույս կու տա իմ գրգանքես, թեւերուս
Պարապնդումն է դատարկ.
Բայց ա՛նառակ՝ երկու ձեռքես կը փախչի,
Մինչ ետեւեն կը վազեմ ես շնչահատ,
Ու շըվարուն եւ հոգնած:

Մինչեւ դաշտերը կը վազեմ հետապինդ,
Մինչեւ անտառն իսկ կ'երթամ.
Բայց ամենուն կրնա ընել ինք դարպաս.
Թուփին, ջուրին, տերեւին.
Ու լըճակին գիրկը կ'իյնա, կամ տեսնես
Ծառին կատարն է թառած:

Մանուկի պես կը պլվի երբեմն ալ
Մայր թուփերու քողանցքին.
Եւ երբ զինքը կը կանչեն ես սրողողած՝
Կը քրքրջա ինք անդին:
Շա՛չ, ապտակ մը կը զարնե մերթ երեսիս,
Նույն վայրկյանին կը փախչի,
Եւ ես ի գո՛ւր կ'իյնամ նորեն ետեւեն,
Մինչեւ դաշտերը կը վազեմ հետապինդ՝
Մինչեւ անտառն իսկ կ'երթամ...

Եւ երբ հուսատ կը հեռանամ թիկնադարձ,
Կռնակես վե՛ր կը մագլի,
Կամ մագերթս կ'ուզեմ համրել, կամ հանկարծ
Ուժգին մեջքիս կը փարի:

Եւ երբ ցասկոտ նորեն ետիս ես դառնամ՝
Վաղո՛ւց փախեր է արդեն,
Ու չորս կողմըս կ'ավրըշտուկե ու վարդեն
Կ'առնե անոր սակավարյուն շափրակներ.
Ու, դարձյալ՝ երբ կը հեռանամ թիկնադարձ՝
Կըռնակես վե՛ր կը մագլի...

Գրականագիտական

Ցնորական Տերյանը

Հունական դիցաբանության, առասպելաբանության անդրադարձներ հանդիպում են նաեւ ավելի հեշտ ընկալելի ակնարկներում, ինչպես «Պատլոյին» բանաստեղծության մեջ, որտեղ Պատլոն իր ընկեր, քննադատ, խորհրդային ժամանակներում նաեւ հայտնի քաղաքական գործիչ Պողոս Մակինցյանը, պատկերվում է որպես հայացքը հեռուն հառած «մի նոր Յազոն...»: Սա այն Յազոնն է, ով Կոլխիդայից պիտի բերեր Ոսկե գեղը, ուն ամուսնությունը Մեդեայի հետ ողբերգական ավարտ պիտի ունենար...

Իսկ հայրենի դարձի միտումներն արտահայտվել են նաեւ «Լինեի չորան սարերում հեռու», «Հովիվներն այնտեղ կրակ են արել», «Հովիվներն ազատ հեռու սարերում», «Երբ կհոգնեն, ինձ տարեք երկիրն իմ հեռու», «Երանի նրան, ով հայրենական // Խաղաղ հարկի տակ հանգչում է հիմա», «Դրեք սիրտս դարավոր // Հարազատ օրբան» բանաստեղծություններում:

Հայրենի եզերքը դառնում է փրկության ափ: Ահա իր կերպարն այդ ճանապարհին.

Հոգնեցի գրքերից անհամար,
Աշխարհից այս խավար ինձ տարեք,
Ինձ տարեք այս երկրից անարեգ:

Ինձ տարեք մեր դաշտերը պայծառ,
Մեր սարերն անառիկ, վեհունիստ,
Մեր արտերն արեւոտ ու հանգիստ...

Փրկեցեք մտքերից այս անծայր,
Փրկեցեք խոսքերից այս խելոք,
Դարձրեք ինձ մանուկ եւ անհոգ:

Փրկեցեք սրբերից այս սուրսայր,
Խորախոց խոհերից իմաստուն,
Մեր սարերը տարեք, տարեք տուն...

Այս մտայնությունը շարունակվում է նաեւ «Այս հին ու նոր գրքերի վրա կորացած...» տողով սկսվող բանաստեղծության մեջ: Ասում ենք՝ եթե անգամ Աստված չկա, պետք է ստեղծել Աստծու կերպարը որպես մարդկության ներքին ազատությունը կատարելագործող վերերկրյա ուժ: Իսկ Աստված կա, եւ ամեն ոք ունի իր Աստվածը, որ նույնն է ու հասանելի է բոլորին, որովհետեւ բոլորի մեջ է:

Ասում ենք՝ ապահերոսացված ժամանակներ են: Եթե անգամ այդպես է, ապա գրողները պարտավոր են ստեղծել այդ հերոսին: Եթե հերոսը չկա, ուրեմն չկա նաեւ գրողը: Իսկ ես այդ կարծիքին եմ, որ այդ հերոսը կա: Ի վերջո, իրականությունն ունի իր գլխավոր հատկանիշերը, որոնք ունեն նաեւ իրենց կողմերը: Հերոսը այդ հատկանիշերի կրողն է:

Արցախի ազատագրությամբ ապրած հերոսներ, գաղափարախոսներ, իրականության շալակը ելած նորօրյա շահագործողներ, այլեւայլ դեմքեր՝ մուրացկանից, երթուղային տաքսիների վարորդներից մինչեւ պատգամավորներ եւ երկրի ղեկավարներ:

Ինձ համար այս ողբերգական-զավեշտալի-ծիծաղելի ու տխուր իրականությունը մեկ ծիծաղելի դեմք ունի՝ հեզանց, ծաղր եւ ծաղրածանակ: Ըստ իս՝ ժամանակը երգի-ծանրեղեն է: Այդպես էր նաեւ Տերյանի ժամանակ: Ահավասիկ.

Անթարձ կորել է սարտիս խնդունը,
Թունոտ մի մեզ է իջել հոգում իմ.
Ստածումները բախիծ ու թույն են,
ալիքը սեւ է, որպես խոկունմ իմ:

Աշխարհը անգութ է ահավոր է,
Եվ ի՞նչ է սերը - անգոր մանուկ մի.
Չարն է հաղթողը, չարն է հզորը,
Թախիծն անգոր է եւ սերն անօգ է...

Մեր կյանքը դառն է, մեր օրը մութ է,
Անգոր են, զուր են վեճն ու կասկածը.
Բոլորը ծաղր է, բոլորը սուտ է,
Չարն է, որ տեր է, չարն ինքն աստված է:

Ծաղրվածը ինքը պիտի ծաղրի, ծաղրվածը հենց իրականությանն ուղղված ծաղր է: Այս բանաստեղծության օրինակով արձանագրեց մի առանձնահատկություն: Որքան էլ Տերյանը խորապես պատկերավոր մտածող է, բայց երբեք պատկերը չի ճնշում, խոսքն ասես մերկ լինի, ասելիքի բովանդատ

կային շեշտադրության աստիճանի: Որոշիչն ասելիքն է, գաղափարն է, որ հազում է բառե շապիկ՝ խոսքի իմաստային միջուկը բորբոքող պատկերավորությամբ:

Տերյանական բարձր ներշնչանքի այլազան արտահայտությունները շատ են, որ լրացնում, մի նրբագծով ամբողջացնում են նախկին տրամադրությունները: Եվ դրանց մեջ՝ «Երկրից քո հավետ հեռու...», «Ոսկե-հանդերձ եկար եւ միգասրող...», «Ինով եմ, գինով եմ ես էլ...» բանաստեղծությունները...

Ցավալի է, որ Տերյանի ժառանգությունն ամբողջական գիտական հրատարակության դեռ չի արժանացել: Պահոցը տարտղնված է, կան նաեւ պակասող ինքնագրեր: Դա այլ ծանր մտահոգություն է: Ուներ նաեւ ծրագրեր՝ մտադիր էր գրել «Դոն ժուան» վերնագրով պոեմ եւ վեպ՝ մտավորականության կյանքից:

Առանձին քննության նյութ է «Տերյանը թարգմանիչ» հարցը: Թարգմանել է Ալբերտ Ենիգլեր, Եմիլ Վերհարն, Վալերի Բոյուսով, Օսկար Ուայլը, Շարլ Բոդլեր, Հայնրիխ Հայնե, Պոլ Վերլեն, Սաֆո, Ռաբինդրանաթ Թագոր, Ֆեոդոր Սոլոգուբ, Կյաչչելավ Իվանով, Շոթա Ռուսթավելի, Ակակի Ծերեթելի: Ընդ որում, Տերյանը ոչ միայն ինքն է թարգմանել, այլեւ կազմակերպել է թարգմանական աշխատանքը, առանձնացրել թարգմանության արժանի հեղինակներին ու գրքերը, ստեղծել թարգմանիչների խումբ՝ ներգրավելով Պողոս Մակինցյանին, Կարեն Միքայելյանին, Ստեփան Զորյանին եւ ուրիշներին:


Ժ. Բանաստեղծության ճանապարհը

Թունանյանն, ինչպես ասացինք, փակեց Արուսյանի բացած փակագիծը: րականության մասին նրա շատ իմաստուն դատողությունները վերաբերվում են ժողովրդական, բանասիրական գանձերի օգտագործմանը: Թունանյանն իր ժողովրդախոսակցական լեզվով, բանասիրական նյութով, ինչպես Տերյանը բնորոշեց, մնաց «ունիկում»: Բայց շարունակվեց Թունանյանի բնաշխարհիկ փիլիսոփայությունը եւ եկավ ու մարմնավորվեց Համո Սահյանի մեջ: Թունանյանին «արթնացնելու» փորձեր շատ են եղել, բայց միշտ էլ դատապարտվել են: Թունանյանի ոգին վերամարմնավորվել է մեկ Բակունցի մեջ (պատմվածքները), մեկ Սահյանի, ով գտավ այն լեզուն, որով Թունանյանը խոսում էր բնության հետ: Խոսքը ոչ թե լեզվի ոճի մասին է, այլ հաղորդակցության գաղտնագրի:

Մինչեւ նախորդ հարցի Տերյանին վերաբերող հատվածին անդրադառնալը, պատասխանեն Ձեր միջանկյալ հարցադրմանը: Հաղորդակցության գաղտնագիրը նյութի հետ խոսելու ձևն է, որ վերածվում է բառի ու պատկերի: Դա արյան ներքին շրջանառության պես մի բան է, որ Թունանյանից անցավ Բակունցին ու Սահյանին, Տերյանից՝ Չարենցին, Չարենցից՝ Սեւակին: Ավելի հնում «Աստվածաշունչ» մատյանից՝ 5-րդ դարի հայոց ապաշխարանքի երգերին, այդտեղից՝ Նարեկացուն, Նարեկացուց՝ հետագա շրջանի ամբողջ հայ քերթությանը: Սա տեսակի սերմն է, սաղմն է, հունդն է, կորիզն է, սա ազգային Բանն է, այն, որ ի սկզբանե էր:

Հարցի պատասխանը որոշակիացնենք Տերյան-Չարենց առնչության շուրջ: Տերյանի ակնարկած գալիք օրը հենց Չարենցն էր: Իսկ Չարենցն իր կանխատեսումները ձեւակերպեց «Յոթ խորհուրդ գալիքի երգասաններին» քերթվածում, որի ուղղակի հասցեատերը Սեւակն է, իսկ հետագա շրջանի ավելի նորերի համար կենդանի է նրա խոսքը. «Հիմի շատ եմ երգիչները - հոգու ուզած տաղը չկա»:

Գրականությունը որքան կանխատեսումների հնարավորություն է ընձեռում, նույնքան էլ որեւէ հզոր անհատականության հայտնությամբ այդ կանխատեսումներին նոր կերպարանք է տալիս: Տերյան - Չարենց հարազատ եւ օրինաչափ կյանք որքան էլ



տեսնում ենք Սեւակի, նաեւ Եմիլ մեջ, բայց դա սոսկ ուղղություն, ուղղվածություն է եւ ոչ թե արժեքային համակաշիւ: Տերյանը շատ բարձր գրական պահանջներ էր ներկայացնում նախ իրեն, ապա իր գրական շրջապատին: Դա ժամ էր հակագրականության հանդեպ: Այս տեսակետից մի եզակի նմուշ է Յուլյա Խանգադյանին հասցեագրած 1914 թ. հունվարի նամակներից մեկը, որի մեջ պատշաճ վերաբերմունք է պահանջում «Իսկական» գրականության հանդեպ, ընդդեմ հովանավորվող անիսկականի՝ «Կեղծարարների կեղծ ստեղծածների»: Սա նրա համար «հասարակական տեսակետ է», գրողի եւ գրականության «արժանապատվության» հարց:

Հայ գրականությունը ռուսերեն թարգմանելու անհրաժեշտության բերումով, ինչպես արդեն նշել եմ, անգամ Մուրացյանին, Նար-Դոսին եւ այլոց նկատի ունենալով, գրում է. «Ճիշտն ասած, ես անծանր այդ բոլոր գրողներին տալիս եմ կուլտուրական նշանակություն, բայց գեղարվեստական ոչ...» (IV, 271): Ահա մեկ այլ գնահատական. «Եթե «Պեպո»-ն ռուսացնես, նա հետաքրքրական չէ ռուսին՝ այդպես է ատում ամենից առաջ Գորկին, որ կարծեմ ռուս է» (IV, 271):

Մեր մշակութային վիճակը Տերյանն իրավացիորեն պայմանավորում է մեր ժողովրդին պատուհասած աղետալի վիճակով. «Թշվառ ու դժբախտ ժողովուրդ ենք մենք եւ այդ չգիտենք ու չենք ուզում ընդունել, եթե գիտենք, կամ եթե ընդունում ենք, ցավող սրտով չենք ընդունում, այլ տանջանքից փախչելու եւ մեր ապիկարությունն արդարացնելու համար ենք ընդունում» (IV, 273):

Տերյանը դեմ էր այն զանգվածային դարձող մշակույթին որպես հակամշակույթ, ինչը ժամանակի ընթացքում տարածվելով եկավ հասավ մինչեւ մեզ եւ դարձավ դրության տեր: Այդ իսկ պատճառով նա ամեն կերպ բարձր արվեստի պահանջ էր դնում: Այդ իսկ պատճառով նա, ով իր գրածի համար գոնե պիտի ամաչի, այսօր մրցանակ ու փառք է ուզում: Այդ նպատակով Տերյանը մեծ կարեւորություն էր տալիս լուրջ քննադատությանը: Մինչդեռ միջավայրն աստիճանաբար իջեցնում էր չափանիշերը:

Տերյանի «Հայ գրականության գալիք օրը» գեկուցման դիրքերից այսօր հայացք պիտի ուղղենք նաեւ ժամանակակից հայ քննադատությանը, հայ գրական մամուլի ողբալի վիճակին:

Բայց կա՞ արդյոք ժամանակակից հայ քննադատություն... Ինչ էլ որ հանդես է գալիս որպես այդպիսին, քննադատություն չէ, այլ ամենաթույլ գրողների աստիճանակարգ ստեղծող եւ նրանց «ոսկեքող» դեղին լորձուկ: Ահա թե մեր մրցանակապաշտ բանաստեղծներն ու արձակագիրները, թատերագիրներն ու մանկագիրները մինչեւ ուր իջեցրին քննադատության խազը կամ ձողիկը: Անպատիվ քննադատություն, որ գրամուլին գրող է հռչակում, պատեհապաշտին գրականության մեջ շրջագայելու հնարավոր

ություն է տալիս, խմբագրում ու առաջաբանում հերթական ապաշոռի պաշտոնյայի «Երկերի ժողովածու»-ն, որ այլ բան չէ, քան մահացու ծանծաղագրություն:

Քննադատության հիմնական արատները, որից զուլջացնում էր Տերյանը, հետեւյալներն են՝ համակերպվածությունը, հաշտվողականությունը, գրապատմական հայացքի բացակայությունը, տեսական-գեղագիտական ինքնուրույն համակարգի չգոյությունը: Հասուն, լուրջ գրական միջավայրի կարող երազանք մնաց: Ներկան անհեռանկար էր, որովհետեւ արժեքային համակարգ եւ չափանիշ չէր գործում, իսկ զարգացումների ընթացքը՝ հուսահատեցնող...

Մտավոր մեկուսացումն հաղթահարելու նպատակով ինչպես Տերյանը, այնպես էլ Չարենցն ստեղծեցին իրենց գրական միջավայրը: Տերյանի համար «Գարուն» ավանախի շուրջ համախմբվածներն էին (Պ. Մակինցյան, Յ. Խանգադյան, Կ. Միքայելյան եւ ուրիշներ), Չարենցի համար՝ նախ «Երեքի» խումբն էր (Ա. Վշտունի, Արմյ, հետո՝ «Standard»-ը (Մ. Մազմանյան, Կ. Հալաբյան), այնուհետեւ՝ «Նոյեմբեր»-ը (Մահարի, Բակունց, Արմեն եւ ուրիշներ), իսկ վերջում՝ հեռակա առկաները՝ Նարեկացու, Աբովյանը, Թունանյանը, Տերյանը, նաեւ Դանտեն, Գյոթեն, Պուշկինը...

ԺԱ. Ընթերցողական խարանդ

Դասագրքերում Տերյանը բավարար ներկայացված է: Բավարար չեն համարում նրան եւ մյուս հեղինակներին հատկացվող ժամաբանակը:

Սովորողը պետք է այնքան հմտություն ձեռք բերի, որպեսզի կարողանա տարբերակել մի գրողի լեզուն ու ոճը մյուսից, այնպես, ինչպես տարբերակում են մի երգիչի ձայնը մյուսից, մի երգահանի ձայնակարգությունը մեկ ուրիշից, ասենք՝ Բեթովենին Բախից: Այդ տարբերակման հմտությունը ձեռք բերելու համար պարտադիր չէ շատ գործեր անցնել, պարտադիր է ճանաչել, հասկանալ եւ ընկալել գրողին, ընդհանրապես՝ ստեղծագործողին: Այս դեպքում կարծես առաջ է մղվում հայտնի ասույթը՝ գրողն իր ոճն է: Թեկուզ այդպես՝ կա ոճի լայն ու նեղ ըմբռնում: Նեղը լեզուն է, լայնը՝ ամբողջ գրողը՝ լեզվով, նյութով, հերոսով, ամենամեծ ինչով: Ահա պետք է այնպես ներկայացնենք գրողներին, որ նրանք հասանելի, մատչելի ու սիրելի լինեն սովորողներին:

Դարոցական ուսուցման համակարգում շատ կարեւոր է անդրադարձը ոչ միայն ստեղծագործողի գաղափարական համակարգին, այլեւ արվեստի հարցերին: աղտնիքն այստեղ է: Ուստի հարցի պատասխանը շարունակեն այդ անդրադարձով:

Տերյանը կատարյալ էր ամեն ինչում՝ անթերի էր ոչ միայն լեզուն, այլեւ կշռույթը, չափը, հանգը, այն ամենը, որ բառն ու պատկերը դառնում են գեղարվեստական խոսք:

Մի առիթով այսպիսի դիտարկում է արել. «Սեզանում դուք կարող եք ցայսօր հանդիպել ռիթմի եւ չափի անհեթեթ ու տարօրինակ անընթերցողության» (ԱՄԹ, Տերյանի ֆոնդ, 113): Այնքան նրբացված ու ճշգրտված էր նրա կշռույթային զգացողությունը, որ համապատասխանություն էր պահանջում եւ նյութի, եւ չափի, եւ կշռույթի մեջ: Իր պահանջներին համապատասխանող օրինակներով հայ պոեզիան առանձնապես հարուստ չէ: Պողոս Մակինցյանն իր հերթին ավելացնում է. «Պոետի թղթերում պահպանվել է մի տեսակ, որից տեղեկանում ենք, թե որպիսի բանասիրությամբ նա ուսումնասիրում էր ժամանակակից ժեսերն ու տարաշախակալ օրենքները» (Պ. Մակինցյան, «Դիմագծեր», 1980, էջ 136):

(շարունակելի)

Դավիթ ԳԱՄԱՐՅԱՆ
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

